



ԹՈՆԴՐԱԿ

MARIS STELLA

Ծիծաղը

հիշողություն է փնտրում
և ծաղկում
փխրուն,
խորաբափանց...

ներկայությունը բո
ասես սրտիս միջով
բեզ կվերադարձնի...

(Արփինե Մ.-ին)

Սրտի համբերությունը
շուրթերին մերձ անապատ է...

մրտող մի թռչուն
շնչահեղձ հորիզոնից...

ժսիտը ասող է խոսում
սրտիդ կղզակներից...
(Զարուհուն)

Թարթիչներդ
հորիզոն են թերթում...

երկինքը բռնկվել է աչքերիդ մեջ,
հանց հրեշտակի թևից արկված մի թախիծ...

սրտիդ մեջ շրջված լաբիրինթոսը
բեզ դիմադրող մի ասրում է սուկ...
(Միլային)

Հորիզոնի թեփուկներով է
ակունքների հուշը զարդարված ...

երկնքով
երազն այնքան է լցվել,
որ անհնար է այլևս այն սպիտակ
կոստյումները ...

լուսաբացի սովերն է
շնչառությանդ մեջ ծաղկում ...
(Քրիստինե Մ.-ին)

Իոսիֆ Բրոդսկի Ճան մարզադասում

««««««« 1
ունով ավելի էս եմ
լինելու: Արևի սակ տեղ
զբաղեցնելու ֆաբրեյն անողայնան նրանց
հաշվին է, ովքեր դրանից մի կողմ են ֆա-
ված: Այն, որ դուք ինչ-որ մեկի ոտքերին էք
կանգնում, դեռ չի նշանակում, որ դուք է
գլխին էլ կանգնեք: Բացի այդ էլ՝ վերևից ձեր
սեսածը կլինի մարդկանց ծովն ու ձեզ դեռ
վերևում դիրք գրավածների աչքի ընկնող, սա-
կայն բնավ ոչ աղաչող դիրքը, որտեղից
կեսնեք նրանց, ում հարուստ ու հայտնի են
կոչում: Մրան դուք է հավելել նաև այն
փաստը, որ հարուստներն ու հայտնիները մեր
օրերում բյուրավոր են, ու վերևում խիստ նեղ-
ված է: Այնպես որ, եթե ուզում եք դառնալ
հայտնի կամ հարուստ, կամ էլ երկուսը միա-
սին, դարձեք, բայց ոտքից գլուխ մի սարվեք
դրանով: Ցանկանալ մի բան, որն ուրիշին է
դասկանում, նշանակում է կորցնել սեփա-
կան ետը, բայց, մյուս կողմից, սա խթանում
է զանգվածային արտադրականությունը:
Այնուամենայնիվ, ֆանի որ կյանքը մի ան-
գամ է սրված, ցանկալի է հնարավորինս խու-
սափել ակնհայտ ռիսկավորումներից: Ի
նկախ ունեցեք, որ սեփական բացառիկու-
թյան գիտակցումը նույնպես հարվածի սակ է
դնում ձեր ետը, էլ չեմ ասում, որ նեղացնում է
իրականության առանց այն էլ նեղ դասկե-
րացումները: Ընկալել նրանց հետ, ովքեր ի-
րենց եկամտների ու արտադրանքի (գուցե և
զուտ սեսականորեն) հիման վրա դասկերում
են իրենց անսահմանափակ հնարավորու-
թյունները, ավելի լավ է, քան ցանկացած ա-
կումբում անդամակցությունը: Աշխատեք
մտանվել ավելի էս նրանց, քան թե նրանց
ոչ նմաններին, աշխատեք գործ գույներ կրել:
Նմանակությունը սեփական յուրահասկու-
թյունը դաստիարակում է, այլ ոչ թե կործա-
նելու: Ես ձեզ անգամ խորհուրդ կսայի ավել-
ի ցածրաձայն խոսել, բայց վախենում աս-
տե՛ք թե դա արդեն չափազանց է: Միտ հի-
շեք, որ ձեր կողմին ինչ-որ մեկը կա՝ ձեր մե-
ծավորը: Ոչ ոք ձեզ չի խնդրում սիրել նրան,
բայց աշխատեք էս անհանգստացնել ու
ցավ չդաստիարակել, աշխատեք նրա ոտքերին
զգույս կանգնել: Իսկ եթե այնպես դաստի, որ
կցանկանաք նրա կնոջը, հիշեք գոնե, որ
դա կխոսի երևակայության ձեր դակասի
մասին կամ չհմտացության ու հավասի դա-
կասի՝ առ կյանքի անսահման հնարավոր-
ությունները: Ծայրահեղ դեղինում փորձեք
հիշել, թե որքան հեռվից՝ աստիճան, սիեզեր-
ֆի խորհից կամ հնարավոր է դրա մյուս կող-
մից է մեզ հասել դա չանելու դասգամը, ինչ-
դեռ նաև՝ մեծավորին սեփական անձի
դեռ սիրելու գաղափարը: Հավանաբար
աստիճան ավելի էս բան գիտեն ձգողակա-
նության ու միայնության մասին, ֆանի որ
դրանք ցանկության աչքերն են:

5. Ամեն կերպ խուսափեք ինքներդ ձեզ
գոհի կարգավիճակ վերագրելուց: Ձեր մարմ-
նի բոլոր մասերից հասկալի ու ուղիղ եղեք
ցուցանալի նկատմամբ, ֆանի որ այն անըն-
հաս ձգտում է մերկացման: Ցույց սվող մասը
գոհի նշան է՝ ի հակադրություն Victoria
նշանի ձևով վեր բարձրացած միջնամասի.
այն հանձնվելու խորհրդանիշ է: Ինչքան էլ
անհանելի լինի ձեր վիճակը, աշխատեք չմե-
ղադրել դրսի ուժերին՝ դաստիարակող, ղե-
նությունը, դեկավարությանը, ռասաներին,
ծնողներին, լուսնային ցիկլին, մանկության-
ը, անժամանակ գիշերաքայնի նստումն ու
այլն: Ծառացանկը ծավալում է ու ձանձ-
րալի, և այդ ծավալն ու ձանձրալիությունն
արդեն իսկ բավարար են, որ միջոց ոտքի
կանգնի դրանի օգտագործելուն դեմ: Մեղին
ինչ-որ բանի վրա գցելու դասին դուք կորց-
նում եք սեփական ուժերով հարց լուծելու վս-
տահությունը: Կարելի է նաև ղեկավար, որ մե-
կացման ձգտող մասն այդքան վճռական էր
դեռուդեն նեղվում, ֆանի որ վճռականությու-
նը բավականաչափ էս չէր: Ի վերջո, գոհի
կարգավիճակն էլ իր հմայվներն ունի: Այն ա-
ռաջացնում է կարեկցանք, արդի է բացառի-
կություն, և մի շարք երկրներ ու նաև մայրցա-
մասներ ամբողջությամբ վայելում են գիտակ-
ցական զեղչերի դարգևած փափկասուն



կյանքը, ինչը ներկայացվում է որդես գոհի
հոգեբանություն: Գոյություն ունի այս հոգե-
բանության մի ամբողջ մեակույթ՝ սկսած
անձնական փաստարկներից, վերջացած
միջոցական դասերով: Անկախ այս հա-
մակարգի բռնած նույնակից, դրա փաստա-
ցի արդյունքը ակնկալիքների նվազեցումն է,
երբ խոչնդակ առավելությունը հայտարարվում
կամ ընկալվում է որդես արժեքավոր նվա-
ձում: Իհարկե, սա թերադասիկ է, ու, հաշվի
առնելով միջազգային ռեսուրսների սղոր-
թյունը, հավանական է՝ նաև հիգիենիկ, որ ա-
վելի լավի բացակայության դասձանով
դուք է բավարարվե՞ք եղածով, սակայն աշ-
խատեք ընդդիմանալ դրան:

6. Ինչքան էլ ակնհայտ ու անդառնալի
լինի ձեր դաստիարակողը, ժխտեք այն, ֆանի
դեռ ձեր գիտակցությունը տեղում է, ֆանի դեռ
կարող եք ոչ-ն արտաբերել: Ընդհանրապես
սովորեք կյանքը հարգել ոչ միայն դրա գե-
ղեցկությունների, այլև դժվարությունների
համար: Դրանք խաղի մի մասն են, ու լավն
այն է, որ սուս չեն: Ամեն անգամ, երբ դուք
սագնադի մեջ եք, երբ ձեզ մոտ խնդիրներ ու
դժվարություններ են առաջանում, հիշեք.
կյանքն է, որը ձեզ հետ խոսում է իրեն հաս-
կանալի միակ լեզվով: Այլ կերպ ասած՝ աշ-
խատեք մի փչ մազոխիս լինել. առանց ինքի
եզ ունելու համը զգալու՝ կյանքի իմաստը
լիարժեք չէ: Եթե սա ձեզ ինչ-որ կերպ կօգնի,
աղա փորձեք հիշել, որ մարդկային արժա-
նադասվությունը բացարձակ հասկացու-
թյուն է, այլ ոչ սակարկելի, հիշեք, որ այն ան-
համեմատելի է ինչ-որ հասուկ խնդրանքների
հետ, որ այն գործում է ակնհայտ ժխտման
հաշվին: Եթե այս փաստարկը դիտարկեք
համարում, մտածեք գոնե անդաստիարակա-
նության այն վակուումի մասին, որը հե-
տությամբ լցնում են չարքերն ու դասարկա-
խոսները. չէ՞ որ կարգավիճակը կամը հրե-
սակներին սիրելի չէ:

7. Աշխարհը, որ դուք դաստիարակվում եք
ոտք դնել, լավ համբավ չունի: Այն էս ավել-
ի լավն է աշխարհագրական սեսանկյունից,
քան դաստիարակ, այն էս ավելի հրապուրիչ
է արտաբերական, քան սոցիալալոգիան: Մա
դրախաչային գործիքի անկյուն չէ, ինչդեռ ար-
դեն նկատած կլինեք, ու հազիվ թե ավելի հա-
ձելի տեղ դառնա մի ինչ տախը, երբ դուք լրե-
պն: Մակայն սա միակ գոյություն ունեցող
աշխարհն է, այլընտրանքայինը չկա, իսկ եթե
լինեք էլ, աղա չկան երաշխիքներ, որ այն
էս ավելի լավը կլինեք, քան մեր ունեցածը:
Այնտեղ՝ դրսում, բառացիորեն և ուր ավելի
վաս է՝ մեսաֆիզիկաբար, ջունգլիներ են, ու
նաև անադաս, սայթափում բարձունքներ,
ձախիճ և այլն: Բայց ինչդեռ ասել է Ռոբերտ
Ֆրոսթը՝ «Լավագույն էլքը միտք միջով է»:
Իսկ մեկ այլ բանաստեղծության մեջ նա ա-
սել է, որ հասարակության մեջ աղբել նշա-
նակում է ներքի: Այդ միջով անցնելու հետ
կաղված մի ֆանի նկատմաններով էլ էս
կցանկանալի եզրափակել ելույթը:
Աշխատեք ուժարություն չդարձնել
նրանց, ովքեր կիրառեն դժբախտացնել ձեր

կյանքը: Այդպիսի էս կցանկանա՞ թե նշանա-
կով, թե ինքնահոգով: Դիմացե՛ք, եթե չեք
կարող նրանցից խուսափել, բայց հե՛նց ա-
զատվե՛ք նրանցից՝ մոռացե՛ք անմիջապես:
Նախ և առաջ խուսափե՛ք դաստիարակու-
նեցից այն մասին, թե որքան անարդար են վա-
րվել ձեզ հետ, խուսափե՛ք, որքան էլ կարեկցող
լինի ձեր լսարանը: Նման դաստիարակները
միայն երկարացնում են ձեր չարակամների
գոյությունը. էս հավանական է, որ նրանք
հույս ունեն, որ դուք խոսակն եք ու դաստիար-
ակներ եք փորձի մասին ուրիշներին: Որդես
այդպիսին ոչ մի անհաս արժանի չէ անա-
դարության վարձանքի (ու նույնիսկ՝ ոչ էլ ար-
դարության): Մեկը մեկին հարաբերակցու-
թյունը չի արդարացնում ջանքերը. արժեքավոր
է միայն արձագանքը: Մա ցանկացած սահ-
մանափակման գլխավոր սկզբունքներից է,
լինի դա դեռական, թե սեփական նախա-
ձեռնությունը: Այնպես, որ ցրեք կամ խլացրեք
արձագանքը, մի թողեք, որ եղածը, ինչքան էլ
այն shax կամ կարևոր լինի, խլի ավելի էս
ժամանակ, քան անհրաժեշտ կլինեք:

Այն թե ինչ են անում ձեր չարակամնե-
րը, իր նշանակությունն ու կարևորությունն է
ստանում ձեր վերաբերմունքից: Այնպես որ
վազե՛ք, սլացե՛ք նրանց միջով, կողմով, ասես
նրանք դեղին լույսն էին, և ոչ կարմիրը: Մի
սղանե՛ք ժամանակ նրանց վրա մտովի կամ
խոսով կամը առնելով, մի կարծացե՛ք այն
բանով, որ ներքի կամ մոռացել եք նրանց.
նախ և առաջ մոռացե՛ք: Այդպես դուք կազա-
սե՛ք ձեր ուղեղի բջիջներն անհմաստ հուզումն-
քից, այդպես գուցե դուք այն հիմարներին
փրկե՛ք ինքներդ ձեզանից, ֆանի որ մոռաց-
ված լինելու հեռանկարն ավելի փոքր է, քան
ներված լինելունը: Փոխե՛ք ալիքը. դուք ի
գորու չեք դադարեցնել հեռարձակումը, բայց
դուք առնվազն կարող եք իջեցնել դրա
վարկանիշը: Այս որոշումը հազիվ թե դուք
գա հրեցակներին, բայց այն կհարվածի
չարքերին, ինչը հիմա ամենակարևորն է:

Այստեղ էս ավելի լավ է կանգ առնե՛ք:
Ուրախ կլինե՛ք, եթե սասած օգտակար հա-
մարե՛ք: Եթե ոչ՝ կողարզվի, որ դուք էս ավելի
լավ եք դաստիարակված աղազային, քան կա-
րելի էր ակնկալել ձեր սարիքի երեսաստղու-
նեցից, ինչը կարծում են ուրախության, ոչ թե
անհանգստության առիթ է: Ամեն դեղինում,
լավ եք դաստիարակված թե չէ, էս ձեզ հաջո-
ղություն են մտադրում, ֆանի որ առանց այն էլ
առջևում ձեզ տններ չեն սղասելու, ու հաջո-
ղությունը ձեզ դուք կզա: Մակայն, կարծում
են, դուք գույն կհանե՛ք:

Ես գնչոնի չեմ ու չեմ կարող աղա-
զան կանխատեսել, բայց անզեն աչքով էլ
երևում է, որ ձեր օգտին էս բան է խոսում:
Նախ դուք ծնվել եք, ինչն ինքնին գործի կետն
է, ու դուք աղում եք ժողովրդավարության
մեջ՝ մղձավանջի և ուտոպիայի արանքում
զսնվող այս սանիքի սակ, որը անհասի ինք-
նահաստանան ձանադարիին ավելի փչ
արգելիներ է դնում, քան այլընտրանքները:

Եվ վերջապես, դուք կրթություն եք
ստացել Միջիգանի համալսարանում, որն
ըստ իս երկրի լավագույն համալսարանն է
զուտ այն դասձանով, որ սասնվեց սարի ա-
ռաջ անհրաժեշտ հնարավորությունն ընձեռ-
եք երկրիս երեսին ամենամոլոլ ուսանողին,
ով անզերեն կարգին չգիտե էլ: Այդ էս էլ՝
ձեր խոնարհ ծառան: Ես այստեղ դասավան-
դել եմ ութ սարի, լեզուն, որով էս խոսում եմ
հիմա, այստեղ եմ սովորել, իմ աշխատակից
ընկերներից էստեղ դեռ ծառայում են ձեզ,
մյուսները թուրքի են, ոմանք էլ հավերժ ֆուն
են մե՛կ Էնն Էրբորի հողի սակ, որի վրայով
հիմա դուք ֆայլում եք: Հասկանալի է, որ այս
վայրն ինձ համար ունի առանձնահատուկ
հուզական նշանակություն, նույն նշանա-
կությունն այն կունենա ձեզ համար մի սարը
սարի անց: Այս չափով էս կարող եմ գուշա-
կել ձեր աղազան. էս գիտե՛ք, որ դուք չեք կոր-
չի, ավելի ճիշտ՝ ձեզ սղասում են մեծ հաջո-
ղություններ: Մի սարը սարի անց այս վայրի
անունը հիշելիս կա՞ք դասող ջերմությունը
կնշանակի, որ դուք կայացել եք որդես մարդ-
կային անհասներ՝ անկախ այն հանգաման-
քից՝ հաստից հաջողության, թե ոչ: Նախ և ա-
ռաջ աղազայում հե՛նց այս սեսակի հաջո-
ղություն են մտադրում ձեզ: Մնացածը կախ-
ված է ձակասագրից ու այնքան էլ կարևոր չէ:

Թարգմանությունն անգլերենից՝
Մարիաննա Վարդանյանի

Բացում են աչքերս: Հասկանում եմ, որ քանձ էի: Հասկանում եմ, որ արթնացել եմ: Հասկանում եմ, որ դեռևս ողջ եմ: Մարափե-լի է. ես դեռ ողջ եմ: Տեսնում եմ պատերից կախված նկարներ: Ես եմ նկարել: Առաջինը Դ.-ի դիմանկարն է: Մենյակում մութ է: Նա նայում է մթությունից... Նշանակում է՝ նա-յում եմ մթությունից. նրան-ինձ, ինձ-նրան: Հետո գալիս եմ ես, կախված եմ ես... պա-տից... ես... կախված եմ... ես... պատից, մե-խից, շրջանակի մեջ, մեխից. պատից կախ-ված եմ բարակ թելով. կախված եմ ոչ վզից, կախված եմ ապակու տակ. շրջանակի հետ, ինքս ինձ հետ, գծերի հետ, որոնցից կազմված եմ, սև գծերի, մթության մեջ, գրքերի ու վրձի-նների դիմաց, գրքերի ու վրձիների մեջ, գրքերն ու վրձիները ապակու մեջ, իմ մեջ, իմ նկարի մեջ, պատի մեջ, մթության մեջ, սենյա-կի մեջ, սենյակի արթնության մեջ...

Ես արթնացա ու ես գիտեմ դրա մասին: Ես տեսնում եմ իմ արթնությունը: Ես գգում եմ թե-լի հաստությունը, որով ինձ կախել եմ պա-տից. իմ նկարը, իմ ինքնանկարը, նրա ինք-նանկարը, ով նկարել է իրեն, ով նկարել է ինձ, ով գիտի իմ մասին, ում մասին ես գիտեմ սուր-ճը խմելուց առաջ ու սուրճը խմելուց հետո... Ես այլևս ոչինչ քեզ չեմ ասի, իմ խոսքերը գծեր էին. հետքեր, գծերի հետքեր, ճանկաժի հետքեր: Ճանկաժձ թուրքը պատել է իմ դեմ-քը, որը բնավ իմը չէ, այլ նրանը, ով կախվել է, բայց չի մեռել: Նա ես չեմ, որովհետև եթե ես կախվելի, ես կմեռնեի, և հետո կախվելու հա-մար այդ պարանը չափազանց բարակ է ինձ համար...

Ես հիմա մտածում եմ՝ որտեղից կարելի է մի նորմալ թոկ առնել, իսկական թոկ, միջնա-դարյան թոկերից, այն թոկերից, որոնցով կա-խում էին հերետիկոսներին, փուկներին, գու-շակներին, գիտնականներին, մարգարեներ-ին... կախում էին ոճրագործներին, դավա-ճաններին, դասալիքներին, ուխտադրուժնե-րին... կախում էին առնետներին, կատուներ-ին, շներին, ագռավներին... կախում էին թա-գավորներին, ծաղրածուներին, մուրացկան-ներին, առևտրականներին... կախում էին սի-րահարներին, ծերունիներին, անհավատներ-ին, հավատացյալներին, երեխաներին, մայ-րերին, դեռահասներին, պառավներին... այն թոկերից, որոնցով կախում էին կախվածներ-ին, ինքնասպաններին, դիակներին, մեռել-ներին, կմախքներին... այն թոկերից, որոնցով սնդուկներ էին իջեցնում հողի տակ, որոնցով հողի տակից գանձեր էին բարձրացնում, օգ-տագործում էին արշավաքներին մեջ... այդ վայրենի, ձիգ թոկերից, որոնցով առազատու-ներ էին բարձրանում-իջնում, զինով լի տա-կաններ տեղափոխվում, թնդանոթներ ամ-րացվում, անդունդների վրայով կամուրջներ ձգվում... Հիմա որտեղի՞ց ճարել այդպիսի մի թոկ և հետո ինչպե՞ս իմանալ ճիշտ ձևը օղակ սարքելու: Ինչպե՞ս են քարկայ պցում, որ օ-ղակը ազատ սեղմվի մինչև վերջ: Կարծեմ մո-նում եմ պարանը... Կարծեմ օղակը կախվո-ղի վզին հագցնելուց առաջ սև շոր են քաշում գլխին, ձեռքերը կապում են հետևից ու աղոթք կարդում... Աղոթքը կարդում են, երբ օղակը արդեն գրկել է պարանոցը: Լսել եմ՝ օդում հայտնվելուց հետո մոտ մի րոպե հոգևարքի ցնցումներ են լինում (կախված է կախվածի վզի ու արյունատար անոթների հաստություն-ից), միջինը մի րոպե է տևում:

Օդում հայտնվելու համար ինձ ավելի մեծ մեխ է հարկավոր, քան այն մեխը, որ պահել է օդում նրան, ով կարծում է, թե ինքը ես եմ: Ինքնանկարը միշտ կարծում է, թե ինքը նա է, ով նկարել է իրեն: Նա կախվել է իր այդ մոլո-րության համար, ես կկախվեմ ուրիշ մոլորու-թյունների համար: Հարյուրանոց մեխը երևի կպահի: Երկու տարի է՝ չեմ կշռվել: Վերջին անգամ ինչքան հիշում եմ վաթսուհինը կիտ էի, թե՞ ավելի շատ... կամ ավելի քիչ?... Կար-ծես թե չեմ չաղացել, մոտավորապես նույնը կլինեն: Մտքերի քանակը տվյալ դեպքում ո-չինչ չի որոշում: Մտքերը միայն քեզ հանում են կախաղան, իսկ երբ արդեն օդում են, քեզ սպանում է քո մարմնի ծանրությունը: Մտքերդ այլևս կշիռ չունեն ու չեն գործում... Իսկ եթե ավելի շրջահայաց լինենք... քեզ քո մտքերը չեն հանում կախաղան, այլ նրանց մտքերը, ովքեր չունեն մտքեր: Քո մտքերը միայն վճիռ են կայացնում ու բնակարանի սենյակների պատերին, առաստաղներին հարձակ տեղ ման գալիս հարյուրանոց մեխը մեխելու... Հարևանները հաստատ կմտածեն, որ սեմ-յակի արտաքին տեսքի մեջ փոփոխություն-

ներ եմ մտցնում: Նրանք երևի կմտածեն, որ նկար եմ պատից կախում: Մուրճի հարված ներքից պատը կողողա. նրանք կհեքադրեն, որ մեծ նկար եմ կախում, շատ ծանր նկար: Մի-գուցե նրանք իրավացի են՝ ես իսկապես նկար եմ կախում կամ այն-նա, ինչը-նում կա-խում եմ, կախելուց հետո կդառնա նկար՝ ան-կախ նրանից՝ ինչ է- ով է եղել դրանից առաջ՝ հեղինակ՞, բնո՞րդ, թե՞ հետևանք: Ես կդառ-նամ նկար: Պատը կլինի իմ շրջանակը: Այս անգամ իսկապես ամբողջովին կնույնանամ ինքնանկարիս հետ... կամ ես չեմ լինի, հետևաբար ինքնանկարն էլ չի լինի: Կլինի նկար, որը ոչինչ չի պատկերում ու ոչինչ չի նշանակում: Դատարկություն: Դատարկ տեղ: Դատարկ պատի վրա՝ դատարկ տեղ: Ես կկախվեմ... Երբ ձայները լռեն, վերևի հարևանը կմտածի, որ ծանր նկարը վերջնա-կանապես կախվեց, ու կփոխի հեռուստա-ցույցի ալիքը՝ հույս ունենալով, որ մեխը չի պոկվի պատից, ու նոր աղմուկ չի բարձրա-նա...

Որտեղից սկսվեց և որտեղ վերջացավ իմ իրականությունը որտեղից սկսվեցի և որտեղ վերջացա ես ոչ իմ իրականության համար Հավանաբար ես ոչ սկիզբ եմ ունեցել ոչ վերջ չեմ եղել ընդհանրապես Ես չեմ եղել այն ամե-նի համար ինչը՞ չի ճանաչել ինձ Ոչինչ չի ճա-նաչել ինձ Ես երբեք չեմ եղել Մարդկանց հա-մար կմեռնեմ ոչ ես Կմեռնի ուրիշ մեկը իմ դեմ-քով Իրականում ոչ-ոք չի իմանա որ այլևս չ-կամ Նրանք կասեն նա չկա բայց այդ նա-ն

Տիգրան ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Իմ մահը

ինձ հետ ոչ մի առնչություն չի ունենա Ես էլ նրա Այնպես որ ինքնանկարը ինձ ավելի նման կլինի քան նա ում մարդիկ ճանաչել են իմ փոխարեն

...երբ թոկը սեղմի կոկորդա, աչքերս դուրս կթռչեն. նողկալի տեսարան կլինի. երակներս կսեղմվեն, արյան հոսքը կդադարի, դեմքս սկզբից կկարմրի, հետո կկապտի, բունքերս կպայթեն, ճակատիս երակը դուրս կգա, բե-րանս կբացվի, ատամներս կսեղմվեն, կցան-կանամ գոռալ, ձայն դուրս չի գա, ոտքով կլիսեմ պատին, հարևանը չի լսի, կնայեմ հե-ռախոսին, հեռախոսը կքի. հեռախոսը ինձ հրաժեշտ էր կտա: Կտեսնեմ պատերից կախ-ված նկարները ու կմտածեմ, որ դրանք չա-փազանց քիչ են, որպեսզի ես իրավունք ունե-նամ չլինելու: Հետո բոլորովին անպասելի կհիշեմ ծանոթ ոտնաթաթերը, որոնք շոյում էին կրծքավանդակս, պարանոցս, անդամս... ոտքի եղունգները կարմիր էին, մատները՝ նուրբ, բարակ, քնքշորեն սառը, գրեթե մար-մարյա... կկարոտեմ: Ոտնաթաթերը ինձա-նից շատ հեռու կլինեն այդ պահին, ինչ-որ փողոցով անցնելիս, կաշվե կոշիկների մեջ՝ կըտ կըտ կըտ կըտ... կամ կլինեն տանը՝ բաղ-նիքում, ցցցուղի եռման շիթերի տակ: Ոտքի մատները ինձ չեն հիշի. նրանք մաքրված կլի-նեն, հազար անգամ մաքրված կլինեն իմ մաշ-կի հոտից, իմ ցանկություններից, իմ բոլոր հի-շողություններից, ամեն ինչից... Ես ներկա-յում եմ: Պարանոցը, որ նախկինում հանձնել եմ թափանցիկ ներբանների շոյանքներին, հիմա հանձնել եմ հաստ, կոպիտ թոկի շո-յանքներին: Երկու տարբեր շոյանքներ. եր-կուսն էլ սպանում են՝ տարբեր ձևերով... նա շոյում էր ոտքերով մարմինս շնչարգելության նուպայից հետո. նա մոռացավ շնչել, դաղա-րեց շնչել, աչքերը փակեց ու քարի պես ընկավ բարձին... Ինչի՞ է նա ապտակներով վերա-դարձրեցի նրան կյանք, ստիպեցի նորից շնչել. որպեսզի չմեռնի, թե՞ շարունակի փա-ղաքշել գրգռված մարմինս... «Քեզ դու՞ր է գալիս», «Եթե դուր չգար, չէի անի...»: Նա նոր- նոր էր ուշքի եկել, հազիվ էր շնչում, բայց նրան դուր էր գալիս, նրա ոտքերին դուր էին գալիս... Ես վերջացրի նրա ոտնաթաթերի վրա, հենց մատների ծայրերին, սավանի տակ: Ես այն ժամանակ դեռ չէի որոշել, թե կոնկրետ որ պատի վրա պիտի մեխեմ հար-

յուրանոց մեխը, ընդհանրապես չլինելու նպատակ չունեի, որովհետև չկայի: Մայիտակ սավանի տակ սպիտակ մերկություն հետ հնարավոր չի լինել, անհնար է, ինչպես դա-տարկ սենյակի մեջ դատարկ սրտով հնարա-վոր չի չլինել, հնարավոր չի ցանկանալ լինել, չցանկանալ չլինել. անհնար է:

Ես չդարձա ոչ գրքի մարդ, ոչ կյանքի մարդ: Ինձ հետաքրքիր չէր: Հիմա արդեն ուշ է, շատ ուշ, բայց կանչում եմ՝ ու՞ր ես, ետ արի, ես չեմ մոռացել: Չայն չկա, միայն պարանի՝ պատին քսվելու ձայնը ու պատի խուլ դողդո-ցը՝ կրունկների ջղակծկվող հպումներից...

Պատը ինձ ճանապարհում է: Միայն պատն է ինձ ճանապարհում: Այդպես էլ պետք է լիներ. ես ավելիին արժանի չէի, նույ-նիսկ պատի մյուս կողմում՝ խոհանոցի սեղա-նին թողած կիսակրճած խնձորին, մի քանի անգամ օգտագործած թելի բարձիկներին, մո-չի մուրաբային... բանկան կիսով չափ էլ չէր դատարկվել. ես կիսով չափ էլ չէի սպրել... Մի սիգարետն ի՞նչ էր այս հանդիսավոր պահի համար... Բայց ո՞վ բերանս կխոթի, ո՞վ կվառի: Ավելի շուտ պիտի մտածած լինեի...

Համակարգչի ֆայլերից մեկում նա մեկն-ված է բազմոցին՝ թևը զցած գլխի հետևում, դեմքով դեպի պատը, այն պատը, որը հիմա ինձ ճամփա է դնում... Ֆոտոն անգույն է. սե-պիա՝ տաք ու սառը երանգներով. երևում է նրա բաց իրանը, նրա պորտը: Իմ սիրած տեղն էր: Ես սիրում էի մեկուսանալ նրա պոր-տի կիսամոլորակում, մենավոր կղզիաբնակի

պես թափառել նրա կածաններով, բլրակնե-րով, կորել փափուկ ծալքերում, խոռոչներում: Բախտս բերել էր՝ պորտի հատվածում նա խուտուտ չունեի. երանության մեջ էի... Նա իմ ընկերոջ առաջին սերն էր, իսկ իմ առաջին սե-րը վաղուց ուրիշն ուներ. ինձանից հետո հա-զարերորդը... Երբ իմ ընկերը բանակից ար-ձակուրդ եկավ, ինձ նվիրեց՝ ԵսՎեԴե-ի փայ-լեցրած փամփուշտ. գլխիկը հանցեցի, մեջը վառող չկար, դատարկ էր: Ընկերոջս ասացի՝ դու ինձ նվիրեցիր մահվան անհնարիմություն-ը: Խոսքերը նրան դուր եկան, հետո հաճա-խակի էր հիշում: Հիմա ես մտածում եմ՝ եթե ընկերս իմանար, որ ես սավանի տակ փա-ղաքշել եմ իր առաջին սիրուն ու մի հավեր-ժություն ապրել նրա պորտի մեջ, ապա կնվի-րեր ինձ բոլորովին ուրիշ բան, ասե՞նք՝ վառո-րով լի փամփուշտ... Սակայն այս բոլորն ան-ցած է. մենք վաղուց չենք հանդիպում. բա-ցարձակ կորցրել ենք հետաքրքրությունը միմ-յանց հանդեպ: Փամփուշտը մինչև հիմա էլ գրապահարանի դարակում է: Երեխայի անվ-նաս խաղալիք: Հուշանվեր:

Մտածում եմ՝ մինչև տնից ընդմիջտ բացա-կայելը արժեք հատակն ավել: Մտածում եմ՝ ո՞նց մոռացա: Մտածում եմ: Դեռևս մտածում եմ. գետնին նկատում եմ ջարդած լուցկու հա-տիկներ, սիգարետի մոխիր, մատիտի տաշեղ-ներ, խնձորի պոչ... չարժեք այսքան ցրված ու փնթի լինել: Մինչև վերջին ակնթարթը չես դա-վաճանում քեզ: Բոլորին դավաճանում ես, քեզ՝ չէ... Մրածդ մատիտը երևի կօգտագոր-ծեն քեզինց հետո: Լ.-ի նվիրած էջանիչը ափ-տու էր. տեսնե կզգահատե՞մ նրա քսցառի-կությունը: Ու՞մ ձեռքը կընկնի հրեշտակի ձեռ-քը, հրեշտակի թևը: Ժամանակ չկա մտածե-լու: Իմ մի րոպեն անցնում է: Համարյա անցել է: Պարանոցիս ու երակներիս հաստությունը չկարողացան ինձ ավելի երկար ժամանակ ա-պահովել: Միայն մի րոպե: Վաթսուն վայրկի-յան: Գրություն կփնտրեն գրպաններիս մեջ, դարակներում, գրքերի վրա, էջերի արանքում: Չեն գտնի: Կմտածեն՝ դիտավորյալ եմ արել: Կմտածեն՝ ես եմ արել: Կմտածեն՝ իրենք են արել: Ինչ ասես՝ չեն մտածի... Մի անգամ քույրս պատմեց, որ երազում տեսել էր ինձ տան դռան մոտ արնադափս փռված: Հարց-րել էր՝ ո՞վ է արել, պատասխանել էի՝ ոչ-ոք, ինքն իրեն է ստացվել: Հիմա ինձ թվում է դա ամենաճշմարտացի պատասխանն էր:

Ափսոս քո լուրջությունը սխալ կհասկացվի, ինչպես սխալ են հասկացվել քո խոսքերը, ո-րոնք միայն լուրջյան են հանդիպել, ու խոսքե-րի, որ նույնիսկ լուրջյուն չէին: Հիմա պարա-նը սեղմում է պարանոց: Դու գրում ես այդ մասին ու դու պատկերացում չունես ծնողնե-րիդ սեռական կյանքի մասին: Դու վստահ ես, որ եթե ինչ-որ խնդիրներ էլ կան, դու ոչինչ ա-նել չէիր կարող. «Ուրիշը հորդ տեղը լինել, իմ պես վիրահատած կրծքով կլին ունենար, հի-մա սիրուհի կպահեր կամ կբաժանվեր կնո-ջից: Խեղճ մարդը ամբողջ օրը աշխատում աս, գործից հոգնած տուն գալիս, հաց աս ուտում ու մինչև քնելը ինտերնետով շախմատ խա-ղում...», «Հիվանդանոցում, երբ գնացել էի ստուգվելու, մի մարդ գոռգոռում էր բժշկի վրա, թե ես նորմալ կլին եմ ուզում, ինձ անձիծ կնիկ պետք չի... Մտքիցս դուրս չի գալիս...Իսկ հերդ մի անգամ չբողոքեց: Շատ զուսպ մարդ աս...», «Մրանք ու՞մ նկարներն են... Պիկասո-յի... երկնագույն շրջա՞ն... Ինչ լավն են. ոնց որ հաշմանդամների նկարած լինի: Նկարիչ-ները ընդհանրապես չեն սիրում, չէ՞, հաշման-դամների նկարել, իսկ ինքը, տեսնո՞ւմ ես, նկարել աս: Ինչ դուրս եմ եկել հիվանդանոցից, ինձ ոչ մի անգամ չես նկարել: Էլ նկարելու բան չեմ, չէ՞...»: Ինձ համար ամենակարևորը միայն ես ու իմ հաճույքներն էին: Ես նկարել եմ միայն ինքնանկարներ ու ջահել, առողջ աղջիկների...Մի ոտքդ այն աշխարհում՝ հանկարծ հիշում ես, որ բժիշկները արգելել են մորդ անհանգստանալ: Ժամացույցն արդեն քեզ նկատի չունի...

Վաղը դուռը կշարդեն... Երբ ամեն ինչ վերջանա, բնակարանը կտրվի վարձով... Ինձ թվում է՝ գլխավերևումս փոշեկուլով հա-տակն են մաքրում: Ականջներս խցանված են խուլ աղմուկով. ոչինչ չեմ լսում, աչքերիս ա-ռաջ մթնել է, աղի համ եմ գգում, երևի արյուն է: Քրիցս ինչ-որ հեղուկ է հոսում՝ տաք... Մարմինս չեմ գգում... Մենյակում կեսօր է, պատուհաններից դուրս՝ անթափանց գիշեր, համատարած սև... Ոտքերիս տակ շուռ եկած աթոռը ստվեր չի գցում: Նրա վրա դեռ կնստեն, ես չէ... Ինչ- որ անտեսանելի մատ-ներ դանդաղ իջեցնում են կոպերս: Պառնում եմ օրորոցում, մամամ հեքիաթ է կարդում: Նրան դեռ չեն վիրահատել: Նա դեռ երիտա-սարդ է ու առողջ: Ես ձևացնում եմ, թե քնել եմ, բայց լսում եմ նրա ձայնը: Մաման գիտի, որ ես ձևացնում եմ ու շարունակում է կարդալ, մինչև իսկապես կքնեմ: Վերջնականապես: Ափսոս: Ինձ էլ երբեք չեմ կարողա հեքիաթներ: Ես դուրս եմ գործածությունից: Այսուհետ՝ միայն գերեզմանոցներ: Անճաշակ գերեզմա-նոցներ: Դիակները տարբեր տարիք ունեն գերեզմանոցներում: Ինձսուս տարեկան ծե-րունին մահանում է ու պառկում հողի տակ, որտեղ ես ավելի երիտասարդ դիակ է, քան յոթ ամսեկան երեխան, որը պառկած է հողի տակ ինձսուս տարի: Յոթ ամսեկան երեխա-ինձսուս տարեկան դիակ: Չառամյալ ծերու-նի-նորածին դիակ: Վաղը դու միօրակյան կլի-նես: Հանգիստ քնիր: Մարմինս կտանեն դիա-հերձարան: Ինչի՞ կտանեն: Պարզ չի՞՞ ինչից եմ մեռել: Պարզ չի՞, որ մեռել եմ... Կտանեն: Պապիս էլ տարան. թեև պարզ էր, որ նա ցած էր նետվել հիվանդանոցային հարկից: Նրան ծածկել էին սպիտակ սավանով: Պատշգամ-բից, որտեղ նրանից մնացել էին միայն ձեռ-նափայտն ու հողաթափերը, ես տեսա ներքևում սավանի տակից դուրս ցցված նրա ծերունական ոտքերը, նիհար, ոսկրոտ ոտքի թաթերը: Նրա աջ ոտնաթաթը կապտած էր: Փտախտ ուներ: Երեք մատը կտրել էին. քին-տով փաթաթված էին, շորորդին ու հինգե-րորդին չհասան, չբարձրացան ավելի վերև՝ սրունք, ծունկ, ազդր... Նա գնաց: Ես գիտեի, որ այդպես կլինի... Ես գիտեի, որ այսպես կլինի...

Անճաշակ գերեզմանոցներ: Ապագայի դիակները գալիս են տեսակցության նախկին ողջերին: Կարմիր-սպիտակ մեխակներ, մո-մեր, խունկ, օղի, հաց, արցունք, թաշկինակ-ներ, հիշողություններ, բարի խոսքեր, հոգոց-ներ... Հստակ տարեթվեր, հստակ փորագր-ված փորագրողի անտարբեր ձեռքով: Փո-րագրողի համար էլ վաղ թե ուշ փորագրող կպահանջվի: Գրիչս մինչև վերջ չօգտագոր-ծեցի: Պատկերասրահի նկարները այլևս չեմ տեսնի, ֆիլմերս չեմ վերա-նայի, գրքերս չեմ վերըն-նայի... »»»»»»» 11

թերջի. մեյրով կզբեն ինձ,

ԱՆԻՉ ԿՈԼՉ ՉԱՅՆԱՅԻՆ ՊԱՏՆԵՇ

Տաղթահարելով ձայնային դասները
ես ազատվում եմ ամենայն չափից
ձայնը կորցնում է խոսքը

Բանաստեղծը
մարդանալով
ինչը չէր կամենում լինել
զեղջով վաճառում է
դարականոն մի ճշմարտություն

Գոյություն ունեն բառեր
սրընթաց և նախահարձակ
հանց գիշանգղեր

Փոխանակ Երկինք համբառնալու
խոսի մեջ եմ նրանք նեղվում
իրենց որը բզկեցելու համար

Երբ գրում եմ
էջն իմ վրա է փակվում

Ես աղբում եմ վաս դարաբաշտում
վաս տեղանում
ես գրում եմ վաս լեզվով

Ես խենթանում եմ իմ թղթե վանդակում

Գրել հակառակ մահվան
անգամ երբ մարտը կանխավ սանուկ ես սվել

Իմ բառերը դասրաս են հարվածելու
փորձում են որսալ
բեկորները կյանքի

Անդասախան է ամենայն
բանաստեղծություն

Անվերջ օվկիանոս
այն սուզվում է
ինչ-որ խեցու մեջ

Իմ բանաստեղծությունները
մրջնանոցներ են

սև խոսքերի միջև
և աղմկոս

բեղուն թագուհիներ
հազարավոր աշխատավորներ առանց թների

Վերընթերցելով բանաստեղծություններս
տեսնում եմ շարդված ու խեղված բառեր
հանց մոլորաբան ծառերն այգու
փոքրկից վնասված

Մի ֆիչ ձյուն կա
իմ խոսքերի միջև

Բայց ծովը սևավուն է
որտեղից ես բառն եմ երբեմն կորցում
նմանվելով իրականությանը



Ես հեզ բանաստեղծություն եմ
առաջարկում
հանց մի բաժակ ջուր

Այն չի հագեցնում _
Այն հեզ մի լիճ է ներկայացնում
ուր դու սուզվելու ես ուղղաձիգ

Երբեմն գեհնից վերցնում եմ
վիրավոր մի բանաստեղծություն
որը մեռնում է
իմ ձեռքերի միջև

Ես նրան թաղում եմ
Եվ ընդլայնվում է մենությունս իմ

Ընչաստղառվելով
էջից էջ
գիրքն ինձ խոսում է
մեղմ ձայնով

Իր բուրբերի թույնի հեռ մեկտեղ
նա ինձ ներհնում է իր մեռյալությամբ

Աբխազին ինձ կսակում է
խոսքերի ինչ-որ շեմարան
որը ցամաքում է փոթանակի

Ինչ որ մնում է
սղասում եմ ով կամ ինչը
ինձ կսղանի

Ես չեմ հորինում բանաստեղծությունը
այն գոյություն ունի ինչ որ տեղ
ժիզվեցնում
կամ կախված է ինչ-որ երազից դուրս
հանց կորցված ձայնափող

Այսօր
ոչինչ չի կատարվում իմ գրության մեջ
Նանց ձյունը որ սևանում է
մեր ֆայլերի ներքո
թուղթը ծածկվում է հեռերով
որոնք սանում են ոչուրեք
անգամ ոչ դեղի մահը

Թարգմանությունը՝ Ֆրանսուերենից՝
Թոնդրակի

ՌՈՒՔՈՎՈՒՄ ՍՅՈ

Միջնադարյան ճապոնացի բանաստեղծ Ռուբոկո Սյոյի (980-մոտ 1020) առաջին հրատարակումը («Կոմասիի գիշերները կամ Յիկադի ժամանակը») Տեղի ունեցավ ընդամենը 1985-ին և Ճապոնիայի գիտական ու գրական շրջանակներում իսկական սկանդալ հարուցեց: Միլիոնավոր ու գրասեր Կի-ոու Կավաբատիին հրատարակում է Կիոտոյի հին գրերի վաճառանոցում պատահաբար գնած 10-րդ դարի մագաղաթյա փաթեթը: Ամենից առաջ ցնցել էր այդ ստեղծագործությունների ժանրը՝ էրոտիկ բանկա, որը մինչ այդ ծանոթ չէր ճապոնական միջնադարյան գրականությանը:

Սրընթաց
Առանց սասանվելու
Դու հեզ հանձնում ես անկողնուն
Այդդեպ զգեստով թռչունն է
Իջնում ձյունի

Ծիծեռնակները մոտոյս են
գործում
Արնագույն երկինքը
Տոզել է զարնան ամբողջից
Այդդեպ ծանրանում է
նեֆրիստ փողը
Սիրելիի ձեռքին

Գարնանային օրեր
Չառիթափ ափի
Եղեգնությունում զսան իրար
Թրթռուն հովհարով
Մարմինն արագույնում է ջրում

Խոնավ վարդը
Կրկին բացվել է
Մեռուի մեջ
Երջանությունը մնացել է
Լեզվի ծայրին

Եսմիջօրեի երեկո
Ցմրուր խմել ենք
երջանությունը
Չմռան արևը
Մեն-մենակ կանգնել է
Ֆուձիի վրա

Ակացիաների միջև
Քեզ եմ սղասում
Ցնցվում յուրաքանչյուր
խսցոցից
Կրկին թափվում են
ծաղկաթերթերը
Սողիսակ ծաղիկների

Դու բացականչեցիր
Չեռնիդ գնեցի՞ր զավազանը
Եվ կրկին լռություն
Խորը
Ոչ մի ձայն

Շաղ սված մանյակ
Խոնավազած կարմիրն ու
սուրման

Քո բուրբերի խայթոցներում
Եվ երբեմնի փարթամ կրծքերը
Եղունգներով ճանկառնված

Բամբուկի աճման համար
Դու նորից իջևանել ես ինձ մոտ
Լույսը բացվեց
Չուր է մաքրելը, թե որտեղ և երբ
Առաջին անգամ ցնցվեց բուսը

Կոսովել են
Բարակ մասները
Ներվա եղեգը
Կեսգիշերվա մեռուում
Բամբուկը ցնցում է վարագույրը

Ափսոս, հաճախ
Մենք սրվում ենք
Խելահեղ ֆուֆանի
Թանկարժեք հագուստից
Թոթափելով փոշին

Թիթեռները
Ինչդեպ գեղեցիկ ծաղիկներ
Չախրում են ծաղիկների
ծովում
Մարմինը ճկվում է եղյամ
հավաքելու
Գեղեցկուհի Կուրմանո

Գավաթի մեջ ոսկեռոդում է
գինին
Նաստիսե սեղանները տառում
են համադամներից
Ինչդեպ լուսնի փերված լույս
Կույտերը դարում են
Թափանցիկ դիդակի մեջ

Մենք չափազանց հեռուն
Գնացի՞մք համբուրվելիս
Կոճակներդ արձակիր
Ախ որքան թույլ են
Կաղերը ամուսնական

Թարգմանությունը՝ ճապոնականից՝
Աշոտ Գաբրիելյանի

Մ Ր Ս Տ Ն Ո Ւ Ք Ո Վ Ո Ւ Մ Ս Յ Ո

Ճակատագիրը սառչում էր գլխիս վերևում՝ ջրով լի այլումինե թասի մեջ: Մոմը դեռ հոսում էր, թե ձեռքերս էին հոգնել՝ թասը ծանրանում էր: Թիթեղյա վառարանի վրա թափված մոմը ծխում էր, կիսամութ սենյակը մոմի խեղդող ծխով էր լցվել: Ծխի մեջ պատկերներ էի տեսնում: Ծան՝ ծխից քանդակված գլուխն էի տեսնում, դուրս ընկած թրթռացող, ալիքվող լեզուն, ճաշտոտ աչքերը, ցից ականջները: Մի ամիս է՝ ինչ ամենուր նրա պատկերն էի տեսնում՝ ամպերի ծվեցների մեջ, անջատված հեռուստացույցի էկրանին, փակ կոպերիս վրա: Գիշերները, քրտինքի մեջ կորած, վեր էի թռչում, օգնություն էի կանչում, լույս վառում ու ամբողջ գիշեր վառված լույսի տակ նստում էի, «Նոր կտակարանը» և «Հազար ու մի գիշերն» էի կարդում: Ծաբաթը երեք անգամ մորաքրոջս ծանոթ հոգեբույժի մոտ էի գնում՝ չէր օգնում: Թեև կծած տեղը վաղուց բուժվել էր, վերքը պոկվել, ընկել էր, նրա խելագար աչքերի փայլը, ազդրիցս մի հարյուր գրամ պոկելու ճիգը, օգնության եկածների աղմուկ-աղաղակը, նրա ոռոնցը, նրա ջախջախված գլուխը, լճացած արյան մեջ ընկած սուր ծայրով երկաթյա ձողը դեռ ինձ հետ էին և ինձ հետ էր վախը, որ սեփականաշնորհի էր ստանալս և այնտեղ էր բնակվում: Մարտոկոթյանս համակարգը լրիվ քայքայվել էր, անընդհատ պայթուցավտանգ, թունավոր գազեր էի բաց թողնում, գրեթե չէի ուտում, բայց լուծողական խմածի պես օրը տասն անգամ վազում էի գուգարան: Օրերս գուգարանների պատերը և հատակի սալիկները ուսումնասիրելով էին անցնում:

Հորս Թամար տատը հորանջելով, աղոթք մրմնջալով՝ դանդաղ պտտվում էր շուրջս, ամեն պտույտից հետո իմ, իր, թասի վրա խաչ էր հանում և ասում էր. «Հիսուս Քրիստոս, Հիսուս Քրիստոս, Հիսուս Քրիստոս»: Ես նրա ձայնը չէի լսում, բայց շրթերիցս շարժվելու ձևից, դեպի վեր ուղղված փակ աչքերից հասկանում էի ասածը և զգում էի, թե ինչպես է դարաշափ կյանքի ընթացքում կոփված հավատից հալածական վախը սարսափահար փախչում իմ միջից: Ստանդարտ ցավերը մեղմանում էին, իսկ ծխակերտ շան գլուխը, աստիճանաբար իր չափուձևը կորցնելով, երկարում ու լայնանում էր, մինչև որ նրանից անջատվեցին ականջները, քիթը, լեզուն և քիչ վերև բարձրանալով՝ լուծվեցին օդի մեջ: Վերջում մնացել էին աչքերը. շան խելագար աչքերի փայլը դեռ ինձ հետ էր, բայց երբ Թամար տատը վերջին յոթերորդ շրջանը գործեց, երեք անգամ խաչ հանեց վրաս ու երեք անգամ «Հիսուս Քրիստոս» ասաց, աչքերը նույնպես լուծվեցին:

Ես ու մեծ տատս նստել էինք բախտին և սպասում էինք իմ բախտին, սպասում էինք մինչև այն կջրքանվի և պատրաստ կլինի ընթերցմանը: Մոմաքանդակ ճակատագիրս նրա ձեռքերի մեջ էր և ջրքանվելու գործընթացը արագացնելու համար նա ջուրը դեմքիս ցողելով թափահարում էր մոմապատկերը: Ես ձեռքիս ավիով դեմքս սրբեցի, ասացի. «Տատ, զգուշ չփշրես»: Նա իր կապույտ, խաղաղ աչքերն ուղղեց վրաս, իր չոր, երկար մատներով ականջս բռնեց, իբր ոլորեց, ասաց՝ «Ձգույ՛ր դու չփշրես»: Ձայնը թույլ էր, մատների մեջ ուժ չկար, դեմքը երկարել, կզակն ու քիթը սրվել էին, կնճիթները խորացել էին, ոչ այն է կապույտ, ոչ այն է մոխրագույն աչքերը հոգնությունից կուլ էին գնացել, կոս արած լրիվ ճերմակ մազերը ցրիվ էին եկել և նրան վիուկի կերպարանք էին տվել: Ստանդարտ ցավերը անցել էին, աչքերս փակելիս կոպերիս վրա շան մոտքը չէի տեսնում, բայց օդի մեջ լուծված վախ կար և հավանաբար այդ պատճառով էի նրան վիուկի նմանեցնում:

Թամար տատը մոմաքանդակ ճակատագիրս դրել էր թղթի վրա, թուղթը դրել էր գոգին և երկար ժամանակ նայում էր նրան: «Աստված իմ, բան չեմ տեսնում, լույսը վառիր»,- երկար լռելուց հետո շշմոջաց նա: Հոսանք չկար և ես լամպը բերեցի, վառեցի: Մենյակը մորից ծխով լցվեց: Արևելյան հեքիաթների ազդեցության տակ լինելով՝ ակնապիշ նայում էի լամպից բարձրացող ծխին, բայց ջինը չկար. թանձր, սև ծուխը

Համբարձում ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Լալ կլիցի



լամպի ապակին մրելով բարձրանում էր առաստաղը մրելու: Մեծ տատս նայում էր մոմին և միաժամանակ մազերն էր կոս հավաքում: Ես էլ էի նայում, բայց ոչինչ չէի տեսնում. թվերի, պատկերների, նշանների աշխարհը հասու չէր ինձ: «Աչքերս լավ չեն տեսնում»,- ասաց մեծ տատս ու, աչքերը փակելով, սկսեց մատներով մանրամասն շոշափել մոմապատկերը. ճակատագիրս փաստորեն մատներով պիտի կարդար: Կարդաց, կարդաց, ասաց. «Շանից վախեցել ես»: Ես ծիծաղալ գալեցի, որոշեցի տատին չբարկացնել ու լուռ գվարճանալ: «Մի աղջկա կհավանես,- ասաց տատս,- բայց մահը կբաժանի ձեզ և նա կզգա քյալանագույն փողի երկիրը»: «Ինչ անեմ՝ չգնա»,- հարցրեցի ես: «Մի տարի առաջ եկավ, ժամանակ խնդրեցի, բայց հիմա հոգնել եմ, աղոթում եմ՝ ժամանակս ավարտվի. ես թեզ չեմ կարող օգնել, բայց դու հավատա ու ասե՛ն ինչ լավ կլինի»: Թամար տատը մոմը փաթաթեց թղթի մեջ, փաթեթը տվեց ինձ և պատվիրեց, որ երեք օր բարձի տակ դնեմ, վրան քնեմ, հետո մեր հողամասում մի փոս փորեմ, այն թաղեմ փոսի մեջ և չմռռանամ դրանից հետո իմ ու փոսի վրա երեք անգամ խաչ հանեմ:

Դպրոցի դասերը ավարտվել էին, ամառային արձակուրդներ էին, և երբ ինձանից տասը տարով մեծ ընկերս՝ Կարենն ասաց, որ աշխատանք կա ու առաջարկեց միասին աշխատել, ես անմիջապես համաձայնեցի: Մենք երկաթյա ժանգոտ դարպասներից ներս մտանք, հողի կատուների ու ոտքի տակ ընկնող կատվածագների ոտեկցությունք քայլեցինք մինչև տան դուռը, և ես մի քանի անգամ թակեցի այն: Քարանձավային մթության միջից նախ ծաղիկների և նոր լուգանք ընդունած մարմնի թարմության հոտը հասավ մեզ, իսկ երբ միջանցքի լույսը վառվեց ու նրան տեսա, սիրտս ցամաք նետված ձկան պես շնչակտուր թայրտաց: Մազերը դեռ թաց էին, արև խմած թուխ մաշկը դեռ թաց էր, մարմնին կպած շապիկի վրա գծագրված շրջանակները կրծքերի պտուկների չափսերն էին մատնում, կարճ, վերջում քանդված թելերով ջինսե շորտը լայն կոնքերին նեղ էր գալիս, պորտը շնչել արտաշնչելու հետ լուսավորվում ու շապիկի տակ թաքնվում էր, աչքերը կատվի աչքերի փայլով էին փայլում: Բարևեց, մեր շտեյն աչքերի մեջ հիացմունք տեսնելով՝ խորամանկ ժպտաց, ներս հրավիրեց: Հյուրասենյակից դուրս եկավ նրա մայրը: Մազերը հարդարված, դեմքը մուրք շպարված էր, բարձրակրունկ կոշիկներ, երևակայություն բորբոքող սև գուգազուկաներ, մինչև ծնկները հասնող յուրկայով էլեգանտ կոստյում էր հագել:

Դեմքին թույլ արտահայտված կնճիթներ կային, բայց կատվի աչքերի փայլը աչքերում դեռ չէր մարել:

Նրանք նման չէին մեր ճանաչած կանանց, նման չէին մեր խոժոռաղեն հարևանուհիներին և նրանց փակի տակ պահվող, մշտապես պատուհաններից կախված աղջիկներին: Նրանց մեջ մի բան կար, որ իմ մեջ հակասական բնագույն, տիրանալու ու հնազանդվելու, բռնանալու ու պաշտպանվելու ցանկություն էր առաջացնում:

Մեր անելիք աշխատանքի մասին գրուցելով՝ Կարենն ու մայրը առջևից էին քայլում, ես ու Մարգարիտան նրանց ետևից էինք գնում: Միջանցքի դուռը երկուսիս համար նեղ էր, կանգնել, ես՝ իրեն, ինքը ինձ էր զիջում, իսկ հետո կողքի շրջված, իրար աչքերի մեջ նայելով միասնամանակ անցանք: Կրծքերը կպան ինձ, սիրտս շալախոյի ռիթմով զարկեց և զգացի, որ ստանդարտս գազեր են կուտակվում:

Հյուրասենյակում, սև կաշվե բազմոցին անշարժ նստած Մարգարիտայի տատը աչքերը բացել-փակելով բարևեց մեզ: Տատի մազերը ներկված ու հարդարված էին, բարակ հոնքերը սև մատիտով, բարթիչները տուշով ներկված էին, դեմքը շպարված էր, երկար, մինչև ոտքերը հասնող ծաղկավոր զգեստ էր հագել: Մարմինը անշարժ էր, միայն գլուխն էր անընդհատ տարրերվում և լռության պահերին լավում էր նրա ականջներից կախված երկար հյուսքերով արձաքյա ականջօղերի դողանջը: Ինքնուրույն տեղաշարժվելու, խոսելու անընդունակ այդ կնոջ արդուգարդը ավելի էր սրում նրա թշվառ վիճակը և դառը ծաղր էր թվում նրա հիվանդ ու ծեր մարմնի հանդեպ: Նրան այդպես տեսնելով՝ հասկացա, թե որքան անողորմ ու ավերիչ կարող է գործել ժամանակը:

Նա լվանում էր իր ոտքերը կարմիր, գունաթափ տաշտի մեջ և արտասվում էր կորցրած սիրտ համար, իսկ ես, նրա սուրճի բաժակի մեջ նայելով, հեքիաթներ էի հորինում, որտեղ կար և՛ բոլորուսաթով արքայազնը, և՛ նոր, մեծ սերը, որ կփշրի ամեն արգելք, և՛ «Մերսեդես 600», և եռահարկ, շքեղ առանձնատունը՝ լողավազանով ու մնացած հարմարություններով: Բայց ես նաև նշում էի, որ նրանց հանդիպման ժամանակ արքայազնը աղքատ կլինի և ժամանակ է պետք մինչև հարյուստ ու հռչակավոր դառնա: Նա հարցեր էր տալիս արքայազնի մասին և ես մեծ տատիցս ժառանգած արհեստը բանեցնելով՝ խորամուխ էի լինում սուրճի մրորի մեջ և նոր մանրամասներ էի դուրս բերում բաժակի հատակից: Նրա ներկված աչքերից հոսող սև առվակները ցամաքել էին, նա

լսում էր ինձ և ժպտալով ոտքերն էր տրորում: Ես հիացմունքս չկարողանալով զսպել, բռնեցի նրա ձեռքը, ասեցի. «Միտոն ձեռքեր ունես»: Այդ պահին Կարենը կողքի սենյակից ձայն տվեց ինձ: «Գնա, գնա գործ արա»,- ասաց Մարգարիտան:

Մի ամսվա գործ էր, բայց այնքան շատ էր նրանց կողքին լինելու ցանկությունը, որ գործը երեք ամսում ավարտեցինք: Երկու շաբաթ է, ինչ գործը ավարտել էինք, երկու շաբաթ է նրան չէի տեսել: Չանգեց, ասաց, որ տանն է: Ծաղիկներ, էժանագին գինի վերցրեցի, գնացի նրանց տուն:

Տատին հյուրասենյակում թողնելով՝ գնացիք, խոհանոցում նստեցինք: Գինու շիշը բացեցի, ինքը կուլ-կուլ, ես ծարավը հագեցնողի պես գինի խմեցինք: Հարմար պահի էի սպասում, որ սեր խոստովանեմ: Միգարետը սիգարետի հետևից վառելով ծխում էի, սիրտս աֆրիկյան բնականների ռիթմով էր զարկում:

Երբ սուրճ խմեցինք, իր բաժակը շրջեց, ասաց. «Մի տես էդ տղեն ինչ եղավ»: «Էդ տղեն ես եմ,-ասի,- երկու շաբաթ է տանջվում եմ, դպրոց ձեռ տան մոտով եմ գնում, գալիս, բայց թեզ չեմ տեսնում»: Մարգարիտան ինքնագոհ ծիծաղեց, ասաց, որ սիրուն չի հավատում, ասաց, որ նոր հարաբերություններ սկսելու համար ինքը պատրաստ չի, ասաց. «Համ էլ մենք Ամերիկա ենք գնում, հենց որ տատին...»: Ես հրաժեշտ տվեցի նրան և քայլեցի դեպի դուռը, և երբ արդեն դուռը բացել, դուրս էի գալիս, Մարգարիտան խոհանոցից դուրս եկավ, ասաց. «Կնեքես փնթի վիճակի համար, էսօր մաման տանը չի, վաղը նոր գալու ա ու տան մաքրությամբ ես եմ զբաղվում»:

Տեղաշարժի մեջ շուռուճուռ էի գալիս, բունս չէր տանում: Պահարանի բարի մեջ կես շիշ գինի կար: Գինին վերցրեցի, դուրս եկա փողոց, պապեցի ու ծխախոտ վառեցի: Գինին խմեցի, և ոտքերս քայլեցին նրանց տուն տանող ծանոթ ճանապարհով: Հասա նրանց փողոց և տեսա, որ նրա սենյակի կապույտ լույսը վառ է, ու ինքն էլ գիշերաճոցով պատուհանի մոտ կանգնել, երկնքին է նայում: Դարպասը բաց էր, տան դուռը բաց էր և չհասկացա՝ դուռը բացել ու սենյակ է վերադարձել, թե՞ մինչև այդ ժամը բաց է թողել: Հյուրասենյակում նստած տատի աչքերը փակ էին: Անաղմուկ անցա նրա կողքով, Մարգարիտայի սենյակը մտա, բայց հենց նրան տեսա, խմիչքի հաղորդած համարձակությունը ցնդեց և ապուշացա: Մարգարիտան պատուհանից դուրս էր նայում և սպասում էր, իսկ ես դռան մոտ կանգնել, ոչ առաջ էի գնում, ոչ փախչում էի: Նա պատուհանը վարագույրով ծածկեց, լույսն անջատեց, ու կատարյալ մթություն եղավ: Խարխափելով քայլեցի, մինչև ձեռքերս նրա մարմնին դիպան:

Հանկարծ, այն ժամանակ, երբ կիրքը լրիվությամբ տիրել էր մեզ, լավեց նրա շնչա-հեղձ լինող տատի խախտոցը: Դժվար էր կանգնելը, անտանելի էր բաժանվելը, բայց պառավը այնպիսի ձայներ էր հանում, որ շարունակելը անհնար էր: Մարգարիտան վազեց տատի մոտ, իսկ ես սկսեցի արագ հագնվել: Երբ հյուրասենյակ մտա, տատը էլ չէր խախտում, իսկ Մարգարիտան բազմոցին նստած արտասվում էր:

Պառավի թաղումից ինը օր հետո նրանք գնացին Ամերիկա: Այդ ինը օրերի ընթացքում ոչ մի անգամ չհանդիպեցինք և միայն թռիչքի օրը հեռվից տեսա նրան: Մինչև վերջին պահը չէի ուզում հավատալ նրանց գնալուն, մինչև վերջին պահը հրաշքի էի սպասում:

Օդանավակայանից հետ գալիս կանգնել, երկար նայում էի ինչ-որ գործարանի շշմոխ խողովակից բարձրացող ծխին, բայց ծխի մեջ պատկերներ տեսնելու ունակությունս կորցրել էի և Թամար տատն էլ չկար, որ հուսադրող խոսքեր ասեր: Մեջս ոչ հավատ էր մնացել, ոչ վախ, ոչ կյանք: Մահը հավատարիմ շան նման քարշ էր գալիս հետևիցս:

Մութ սենյակիս մեջ փակվել ու օրերով տանից դուրս չէի գալիս: Մարդու երես չէի ուզում տեսնել, և արևի լույսը հոգուս մեջ որդեր էր բուծում: Ուզում էի երկու գրքերն էլ վառել, ու ասել. «Ծուխ էիք, ծուխ դարձեք»:



Անահիս Հայրադեսյան

ֆանի որ հղի եմ

ֆիչ ա Պասահուժ նր նույն օրը համ նկարում համ գրում եմ ռսանավոր

առավոտից գնացի կսուրններով ֆռացի ֆռացի անձրևից լվացֆ քացացավ ներսում փռեցի հեսո էլ գրեցի ռսանավոր իմուիմ մասին

գրեցի որ հարցնեմ

ոնց ա Պասահուժ նր նույն օրվա մեջ ֆեզ զգում ես էնֆան երջանիկ հեսո ամեն ինչ դառնում ա ֆաֆմեջ

ու չես կարող ոչ խմել ֆանի որ հղի ես

ոչ լացել ֆանի որ հղի ես

ոչ էլ գլուխդ Պասերով սալ ֆանի որ հղի ես

մենակ ուրախանում ես կամ գոնե հույս սալիս հիշելով որ ներսումդ մեկն էլ կա ու հավանաբար ֆեզ Պես մեկը ու որ դու մենակ չես

էդ մենակության զգացումը հիմա չունեմ ֆանի որ հղի եմ...

ոնց ա Պասահուժ առավոտը զարթնում եմ հազնվում երգում եմ հեսո գալիս եմ տուն ու չեմ գոռում չեմ լացում ձեն ձուն չեմ հանում

ո ո ն ե գ ի ս ո ո ն ե գ ի ս ո ո ն ե գ ի ս ո ո ն ե գ ի ս ո ո ն ե գ ի ս ո ո ն ե գ ի ս գ ե ս ն ս ս ւ ւ ւ ւ ւ

Գիանա Գրիգորյան

Երեկ, երբ անցյալն ինձ կասարյալ թվաց, ներկան՝ չճերճչող, իսկ աղազան՝ անորոշ, ես որոճեցի բարձրանալ ճանադարհիս Պասահաժ առաջին լեռն ու այնճեղից ցած գլորվել։ (Արժե՞ դա ինճնասոդանություն անվանել, թե՞ խելագարություն, կարևոր չէ)։

Երբ հասա գագաթ, անցյալն ու ներկան իրար էին ձուլվել։ Հանկարծ հիշեցի գլորվելու մասին։ Հանդարտ ֆայլերով իջա. աղազան ֆայլերիս մեջ էր։

Որդես ներճնաճո՞ր՝ հագա անցյալը (Որը կարող էի և չհագնել)։

Որդես ներկա՞ (որը և կա և չկա) հագա մարմնիդ բույրը։

Որդես աղազա՞ հագա կոճիկները (որոնճ Եաս մեժ էին)։

Ինձ անճեր Եուն չեմ զգում ֆանի որ հղի եմ ոնց ա Պասահուժ նր նույն օրը նկարում եմ ու գրում եմ ռսանավոր զանգում եմ մամայիս Պադայիս կարոտում եմ չոբանիս ձագն ինչ եղավ մոխոս ոնց ա ալիսան ֆնած ա վերջին նճվածները սաղ իմ Եներն եմ եղել

հիմա ոնց ա Պասահուժ որ ուրիշ ճերեր ունեն ու ինձ չեն հիճում երբ ես տասը կիլոյանոց մոխոյին օրը չորս անգամ չորս հարկ բարձրացնում իջեցնում էի ման տալիս սիրում անգամ ալիսայի վրա գոռում որ մոխոյին չուճի

ու ասում էրեխես հաչալով ա ծնվելու ու էդդես ասում էի ֆանի որ հղի եմ...

ursխառնոց

սիրս խառնում ա

եթե նախկինում կարոտից էր խառնում հիմա խառնում ա անընդիաս

ու ստիղված գրում եմ անկատդ ու անիմաստ փուստեր գրում եմ մանրամասն ադորումներիս մասին թե ինչդես ամեն օր ինֆս ինձ ու խաչին համոզում եմ այսինճն փորձում եմ տվորեցնել որ մայր ու հայր ենճ դառնալու մի լակոտի ում Պասձառով առավոտից իրիկուն արխառնոց

մայրս ասում ա առաջինը չես ու ոչ էլ վերջինը թե իբր հեսո ամեն ինչ կմոռանամ էն որ փոքր ժամանակ խաբում էին ֆարի մեջ արյուն կա կամ թե կմեծանաս կմոռանաս հիմա էլի նույն հեճիաթները

բայց ես մեժ մարդ եմ արդեն մա ու իմ արխառնոցն ու դրա հեճանճներն էնֆան էլ ուրախ չեն նոր տարվա կանաչ փուչիկի Պես մանավանդ որ չեմ զգում ներկայությունը նրա

ամեն օր մտածում եմ ախր ես չբեր էի

էս ոնց հանկարծ հղիացա

ինֆս ինձ համար որոճել էի իմ չբեր լինելու հաստատ հեճիաթը ու մեկ էլ բաբամ որոճեցիր լույս աճխարհ գալ գալդ բարի միայն թե մաման ուզում ա գործ անել ֆոտո գրականություն ձաճ զնալ ու գալ ու ֆեզ հիմնիկվանից ասում եմ ուզում ես ընկերացիր ու մեկ էլ հա ես իմ էըը ֆեճմ դու ֆոնը տեսնեճֳ ով ա հաղթելու...

օրը սկսվում ա

օրը սկսվում ա բարձիս վրայի չոբանի Եան ձագի աչքերին նայելով ամեն դեդոբում էս Եները լրիվ ուրիշ եմ չոբանը մեկ ա ուրիշ Ե

դեռ երեկոյան վրայից գոմի հոտ էր գալիս փիս մի հոտ որ մարճեցի զեյթունի բնական օձառով թույլ ֆացախաջրով թրջած ու Պինդ մզած Եորով հեսո զցեցի տեղաճոբիս մեջ ու միասին ֆնեցինճ

օրս սկսվում ա փորիս հեճ խոսալով բարև Եունիկ ոնց ես

օրս սկսում ա բարև ջիգար իմ սերն ես դու սկսվում ա օրս առաջին հերթին մի հաս զուզարան վազելով ջուրը բաղնիքից բերելով Պլաններս բարձրաձայն կրկնելով

օրս սկսվում ա

անոդայման սկսվում ա հայելու մեջ մի հաս բերանիցս մեժ ժղիտ զծագրելով Եներին դուրս հանելով նրանց ֆաֆն ու Եըըը մարճելով

օրս սկսում ա մեյլս ստուգելով սմայլիկ բան դնելով նախաձաճի մասին մտածելով մի բան բարճելով ուճելով խմելով

հեսո արդեն տեսնում եմ ժամը ախր չորսն ա բայց աման չամանտունեղ մնացել ա տներն էլ չեմ ալվել բայց օրը ձաճ ա դառնել վահանի համար նկարներ դեռ չեմ զտել դեռ չեմ գրել գրանճի դիմում չեմ նայել ինչ կա չկա աճխարհի մյուս ծայրերում

բայց օրս վադուց վադուց սկսվել ա

ո ո ն ե գ ի ս ո ո ն ե գ ի ս ո ո ն ե գ ի ս ո ո ն ե գ ի ս ո ո ն ե գ ի ս ո ո ն ե գ ի ս ո ո ն ե գ ի ս գ ե ս ն ս ս ւ ւ ւ ւ ւ

Այրիբ ֆաղաֆականությունը, անջատիբ լույսը, այրիբ ամենը՝ թողնելով միայն լեռն ու անտառը։

Լսիր նորածնի ֆո ձիչն անտառում և զտիր ֆո բնթացքը՝ իբրև լեռ։

Ես ուզում եմ զտնել իմ Պասկերը։ Պարզվեց, որ անհայտ ժամանակներից մինչ օրս ես ադրել եմ 7777 կյանճ։

7777 անգամ ես ծնվել եմ միևնույն դրդադատճառով՝ ներդաճնակ սիրո դրսևորում։

7777 անգամ ես մահացել եմ նույն Պասճառով՝ մասնիկ աններդաճնակ ու բորբոսնած հասարակության։

Ես Պասրասսվում եմ դուրս գալ ինֆս ինձնից և առաջին հերթին՝ բորբոսից...

Ես ինֆս բորբոսն եմ, որ փորձում եմ զտնել առաջին ու միակ ծնունդը տանող ճանադարհը։



Ինձ ասել էին, որ այնտեղ աստիճաններ կան ու բարձրանալու դեպքում կգտնեմ նրան:

Երբ վարորդին խնդրեցի սպասել աստիճանների մոտ, նա առանց երկար մտածելու արգելափակեց: Ես աստիճաններ չգտա. կորել էին, անհետացել կամ ի սկզբանե չէին եղել:

Ես քիչ ժամանակ ունեի, ու ամբողջ օրն ապարդյուն անցկացնելը զգալի կորուստ էր ինձ համար: Որևէ կերպ պիտի նշանավորեի օրս, որ չնոռանայի: Վերջապես, երբ հայրս, որպես կանոն, հարցրեց, թե ի՞նչ եմ արել այդ օրը, կարողանալի պատշաճ պատասխան տալ: Մոտակայքում կտրած ծառ կար: Ես չափեցի բնի տրամագիծը: Ես հորս կպատասխանեի, որ այսօր սովորեցի չկտրել ծառերը, ու մի կտրած ծառ տեսա հիսուն աստիճաններ տրամագծով:

Առաջին փորձի ծախսողումից հետո որոշեցի հետևել մեկ այլ խորհրդի. նրան հարկավոր է փնտրել մութ վայրերում, արագ լույս վառել, որ հանկարծակիի գա ու չհասցնի նախօրոք հեռանալ:

Մթնոլ էր: Ես վառեցի լույսը: Այստեղ միայն տարբեր տեսակի ու գույնի կոմպոզիցիոն, փոշիով բողբոջված տարրաներ ու համապատասխան կափարիչներ էին: Նա չկար: Չէր եկել. ոչ մի ոտնահետք կամ նշան չկար: Նա նույնիսկ կոմպոզիցիոնից չէր համտեսել:

Պատուհանից դուրս նայեցի: Սառը քամին հարվածեց դեմքիս: Երկինքն անամպ էր, կենտրոնում՝ լիալուսինը:

Անհաջողակ լինելու զգացումը համակել էր ինձ: Ամենայն բծախնդրությամբ հիշեցի աստիճանները, կտրած ծառը, բնի տրամագիծը, հիսունի գրոն, տարրայի կափարիչը:

Մտովի բնի շրջագիծը, գրոն և կափարիչը կիսեցի երկու մասի. կիսալուսին ստացվեց: Շուրջս ամեն ինչ՝ առարկաները, մարդիկ, իրար ճման են: Դրա համար էլ փնտրում եմ նրան: Ո՛չ, սխալ կլինի լուծման ժամանակ երկրորդը: Այսինքն ես չէի կարող կարտուել որովհետև երբեք չեմ տեսել նրան: Համոզված եմ, այսպես թե այնպես, մի օր դեմառդեն հանդիպելու եմ: Պարզապես վերջերս հարցերի լուծման ժամանակ երկրորդը կարողացավ շտապողականություն եմ ցուցաբերում:

Այս ամենից հետո հուսահատության ու թախծի համակումը կարծում եմ բնական է: Օրերով տանից դուրս չէի գալիս, չնայած շտապում էի, ու չգիտեի որտեղ փնտրել:

Ինձ նույնիսկ առաջարկեցին փնտրել գմբեթի տակ: Ես արագ, առանց երկար մտածելու, որոշեցի գնալ՝ թարցնելով շտապողականությունից արթնացած թախիծը, հուսահատությունը և հավատի բացակայությունը:

Չորս ողորկ սյուները կամարներ էին կրում, դրանց վրա հենվող գմբեթն ու ճառագայտի խաչը: Հետո երկինքն էր, իսկ ավելի վերև՝ Ամենակողմնորոշ:

Հարկավոր էր բարձրանալ ու Աստուծոց անձամբ հարցնել, կամ կանգնել գմբեթի վրա՝ ու փնտրել նրան հեռու հորիզոնում:

Ամբողջ մարմնով՝ որովայնով, ձեռնափերով, ոտքերով, գրկեցի սյունը: Անհնար ոչինչ չկար, կարելի էր նմանվել պարան մագլցող մարզիկին: Ընկա ցած, որովհետև ես մարզիկ չեմ: Անկարողության զգացումը նորից համակեց ինձ: Որոշեցի լինել ամբարտավան և հայտարարել իմ անհավատության մասին: Երբ չես հավատում, շարունակում ես փնտրել:...

Փողոցով քայլեցի, շտապեցի, բայց ոչնչից չուշացա: Եղանակը սկսեց ցրտել, կարծես անձրևելու էր: Ավտոբուսի կանգառում կողքիս կանգնած տիկինը անսպասելի ասաց.

-Գնա բախտագուշակի մոտ: Առաջին հայացքից նկատեցի նրա սև գլխարկը, հետո, որ շտապում է, այնուհետև նրա խոհարարական գիրքը:

Կինը փորձեց բացատրել: Երբեմն հայտնվում էր անելանելի իրավիճակներում, դիմում էր գուշակների օգնությանը ու խորհուրդ էր տալիս բոլոր

րին:

Կինը մի քանի նորություններ ասաց խոհարարության մասին:

Մոխր օգտակար է առողջությանը: Միատորը անհրաժեշտ է օրգանիզմին:

Կաղամբ: Այստեղ երկար խոսեց: Ասաց՝ ընթրիքի համար դողմա է պատրաստելու: Հարցրեց՝ ինչ դողմա եմ սիրում:

-Նախընտրում եմ ածուխն ու երջանկությունը փաթաթել կաղամբով, ու մոտ քառասուն րոպե դնել կրակին:

-Հետո՞:

-Ստացվում է եփված ու ածխացած երջանկություն:

-Իսկ հորթի մի՞սը:

-Այո: Երջանկությունը նոր մորթած հորթի մսի համ կունենա:

Մենք հրաժեշտ տվեցինք միմյանց, ու ես բարձրացա ավտոբուս:

Պատուհանից դուրս էի նայում ու մտածում: Համենայնդեպս կարելի էր փորձել: Գա գերադասելի էր անորոշությունից ու ոչինչ չանելուց: Կարծում էի՝ կհայտնվեի կիսամութ սենյակում ու ծաղրածուի նման շարված գուշակը կխնդրի մեկնել ձեռնափա՝ գուշակությանն օժանդակելու համար:

Երբ ներս մտա, իմ դիմաց կանգնեց սափրած գլխով աղջիկ՝ վանդակավոր գնդակը ձեռքին: Նա մոտավորապես իմ կոնքերից էր կամ մի փոքր ավելի: Աղջիկն ինձ ծանոթ թվաց: Նրան որևէ տեղ տեսել էի՝ ինչ-որ հին լուսանկարում: Հազել էր տափակ կոշիկներ, բամբակյա կիսագուլպաներ, հաջորդաբար կիսաշրջագետ, բլուզ, իսկ աչքերը... Նրա գնդակ աչքերում զվարթ արտահայտություն կար:

Ես առհասարակ լավ չեմ խոսում, հատկապես երբ հանկարծակիի եմ գալիս: Ընդամենը մի քանի կցկտոր բառեր կարողացա ասել, որից նա ոչինչ չհասկացավ: Անկեղծ ասած՝ ես նույնպես: Ուժեղի գերտրոմով հայտնեցի այցիս նպատակը: Կարծես մի փոքր տխրեցրի նրան, որովհետև ասաց.

-Իսկ ես կարծում էի, եկել ես ինձ տեսնելու:

Նա կանգնել էր իմ դիմաց ու գնդակը, հանդարտ խփելով գետնին, բռնում էր: Այս գործողությունը կրկնվեց մի քանի անգամ: Նրա պահվածքի մեջ հաստատականություն կար:

-Հիշո՞ւմ ես, երբ որ ծնվեցիր, ոչ որ չհավատաց: Ինձ միշտ հաճելի է հիշել ծննդյանս օրը: Նույնիսկ ուզում էի, որ պատմի ապրիլի մեկի, հորս երկնությունը և ուշացման, վերջապես հիվանդանոց գալու, հետո տոնախմբության ու արդեն անցած-գնացած անելիքությունների ու կատակների մասին:

Աղջիկն աշխույժ հայացքով հետևում էր գնդակի թռիչքին, որ հանկարծ վրիթվել: Գնդակը նույնպես ծանոթ թվաց:

Առաջին անգամ, երբ հղի կին տեսա, վախվորած հայացքով նայեցի ընկերներիս: Նրանք հանգստացրել էին ինձ, ասելով, որ կինը գնդակ է կուլ տվել: Այդ պատասխանն ինձ լրիվ բավարարեց: Դրանից եզրակացրի, որ նմանատիպ գնդակից ծնվել եմ և ես:

Աղջիկն ինձ առաջարկեց գնալ խաղալու: Մերժեցի: Ես դեռ չէի մոռացել, թե ինչու եմ եկել: Նա քաշեց ձեռքս:

- Ես փնտրում եմ նրան,- ասացի,- պետք է օգնես գտնել:

-Մի՛ անհանգստացիր, նա կգա:

-Ե՞րբ:

-Կասեմ՝ եթե խաղաս ինձ հետ:

Խաղահրապարակը բացօթյա էր: Նա միանգամից բաց թողեց ձեռքս ու սկսեց այս ու այն կողմ վազվզել: Ես ինձ լքված զգացի: Այստեղ ոչ մեկին չէի ճանաչում: Եկել էի գտնելու, բայց աղջիկը հուսահատեցնում էր: Ակնհայտ է, որ գուշակների հետ դժվար է, երբխաների հետ՝ առավել ևս:

Առաջին անգամ մտածեցի հեռանալու մասին: Խաղահրապարակում ծառեր ու շատրվաններ կային, օղբ մաքուր էր, աղմուկ չկար. կարելի էր

Լիլիթ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿՈՐ ԴԱՏԱՎԱԾՔ

փոքր-ինչ մնալ, թեկուզ ամբողջ թոքերով թթվածին շնչելու համար:

-Ինձնից երկու տարի հետո, սեպտեմբերի մեկին առաջին անգամ դու գնացիր դպրոց,-ասաց նա:

-Հիշում եմ: Սպիտակ վերնաշապիկը համադրել էի մուգ մանուշակագույն կիսաշրջագետի հետ: Գեղեցիկ էր ստացվել:

-Սպիտակ կոշիկները մոռացար:

-Այո՞, բայց վաղուց էր: Ինձ դպրոցում սովորեցրին օղակ պտտել: Գառընկերներիս մեծ մասը բակում էր սովորել: Ես չգիտեի, որովհետև հազվադեպ էի խաղում բակում:

Խաղահրապարակում փորձեցի օղակ պտտել: Ստացվեց: Դեռ չէի մոռացել: Աղջիկը հետևեց իմ օրինակին: Նա դեռ չձևավորված կոնքերն անկանոն շարժեց, բայց երկար չկարողացավ պահել որովայնի հատվածում: Մի բան, որ աղջկան լրիվ անհավանական թվաց: Մի քանի անգամ կրկնեցի, որ դպրոցում կսովորի. նրա թափառող ուշադրությունը հեռուներում էր, ինձ չսեց:

-Հիշո՞ւմ ես, քո դասընկերները որոշել էին ծեծել քեզ:

Գլխով դրական նշան արեցի:

-Որովհետև դու ամենասպիտակն էիր: Իսկ նրանք սևամորթ էին:

-Բայց թույլ մաշկ ունեի,-ասացի:

Ես ամենայն մանրամասնությամբ կարող էի քվել դեպքերի հաջորդակառությունը:

Առաջին դասամիջոցից հետո ինձ հայտնեցին հանրնդիսանոր որոշման մասին: Մինչև վեցերորդ դասաժամը ապրեցի միայն սպասելով: Ֆիզկուլտուրայից հետո աղջիկների հանդերձարանում նախատեսվում էր իրագործել: Բայց ոչ մեկը չհամարձակվեց հարվածել ինձ: Չճանաչվեցի միայն սպանող չկար. ես ամենացածրահասակն էի, նիհարը և ընդամենը սպիտակ մաշկ ունեի:

Ես երկրորդ անգամ մտածեցի խաղահրապարակից հեռանալու մասին:

Նրան կարող էի գրկել, ու միասին դուրս կգնայինք: Ես կշարունակեի փնտրել նրան: Կոյնի իսկական գուշակների. նրանք չէին հիշեցնի անցյալը:

Աղջիկը որոշել էր ինձ ցույց տալ ամբողջ խաղահրապարակը: Ընթացքում խնդրեց ճոճել իրեն, սղարանից իջնելիս՝ բռնել: Պատմում էր, որ պահեստներ, ու ասպատարաններ ունի: Նարին ու կիտրոն էլ պահում՝ թո՛ր, թո՛ւ: Խոստացավ հյուրասիրել, բայց չասաց երբ: Շատրվաններից ամենամեծի մոտ նա կտրուկ կանգ առավ: Իրականում շատրվանը այդքան էլ մեծ չէր: Հենց մանուկների համար էր նախատեսված: Վայրկենական հանցեց ապակի ասելով.

-Ես լողալ եմ ուզում:

Թույլ ճշացի:

Ամռանը գնացել էիճք լճափ: Որոշեցի լողալ: Ալիքներից ամենախոշորը մի հարվածով առավ ինձ իր գիրկը: Եթե հայրս չլիներ, հնարավոր է խեղդվեի: Հետագայում մոլորեցի առջև կանգնած հայրս նկարեց լիճը ու մայր մտնող արևը: Երբ նայեցի նկարին, ամուր բռնեցի հորս ձեռքը, որ չխեղդվեմ:

-Մի անհանգստացիր,- ասաց աղջիկը,- մինչև լճափ գնալը չորս տարի ժամանակ ունեմ: Ես դեռ չեմ վախենում ջրից:

Իսկապես վախենալու կարիք չկար: Ձուրը հագրված ծնվեցի նրա սանձ մագրի հակառակ ուղղությամբ: Փրփուրով լի ջրի շիթերը ցայտում էին այս ու այն կողմ: Մեներ ուրախ էինք ու ծիծաղում էինք: Այժմ աղջիկն ինձ ավելի հարազատ էր, քան նախկինում:

Ես նրան ասացի.

-Լողանալուց հետո լա՛վ սրբվիր, որ չհիվանդանաս:

Ես նրան ասացի.

-(Քանի որ գիտեի ծիրան շատ է սիրում): Ծիրանը խակ չուտես, փորկիլը կցավի:

Աղջիկը մոտեցավ ինձ ու գլուխը հպեց որովայնիս: Չեղբերով փաթաթվեց ինձ: Նրա՝ փշերի պես աճած մագրերը ծակեցին վերնագգեստս ու հասան մաշկիս:

Ես հոգ տարա նրա մասին: Ես աղջկան որովայնով սիրեցի:

Նա հարցրեց.

-Հիշո՞ւմ ես,-ու շարունակեց:

Ասացի.

-Հիշում եմ:

-Հիշո՞ւմ ես,-ու պատմեց:

Ես հերթականությամբ հիշում էի բոլոր դեպքերը՝ ամենատշագրավ մանրամասներով: Արդեն հոգնել էի փորձերի այն, ինչ գնացել էր ու միգուցե

չէր կարող վերադառնալ: Արդեն անտեսել էի միջավայրից, որովհետև ծերուկին ներս մտնելիս չէի նկատել: Նա հանկարծակի հայտվեց: Շատ պատահական՝ չկար, հետո կար: Մի քիչ հոգած էր երևում: Աղջկա գլուխը հպանցիկ շոյեց ու կհեռանար, եթե աղջիկը չխնդրեր կոնկրետ իր կոշիկները:

Կոնկրետցի հետո ծերուկը նույն գորովալից հայացքով նայեց ինձ, հետո՝ կոշիկներին:

-Հիշեցի՞ր:

-Հիշեցի՞ր,-ասացի աղջկան:

Ամեն առավոտ Նշան պապիկը տանից դուրս էր գալիս ու միայն երեկոյան վերադառնում: Անկատ անցնում էր մեր պատուհանի մոտով, երբ արդեն քնած էի լինում: Ես վաղ էի արթնանում, որ հասցնեի տեսնել նրան ու խնդրում էի կոնկրետ կոշիկներս:

Երբեմն հարբած էր տուն վերադառնում: Ժամերով անօգնական ընկնում էր ծառի տակ: Սկզբում երեխաները ծաղրում էին,նա հայտնում էր: Հետո սկսեցին քարերով խփել. վերջապես իրենցից թույլին էին գտել:

Մի անգամ ինձ քաշելով բերեցին նրա մոտ: Ասացին որ եթե իրենց հետ եմ, ուրեմն պիտի քարով խփեմ:

Ես դեռ փոքրուց սիրում եմ Նշան պապիկին:

Հիշեցի ու բարկացած նայեցի աղջկան: Ես փնտրում էի նրան: Աղջիկը պետք է օգներ ինձ:

-Ես չեմ գուշակելու քո ասպանան:

Աղջիկը կարողաց մտքերս:

-Գիտե՞ս ինչ կանեմ: Ես կանցնեմ ծիածանի տակով ու տղա կդառնամ:

Նայեցի երկնքին: Վերևում իսկապես ծիածան կար: Վայրկենական վախը համակեց ինձ: Ես կարող էի կորցնել աղջկան, ու գուշակին:Նա վազեց դեպի ծառանը, ես՝ ընկա ետևից: Աղջիկը ցատկեց քարի վրայով, մի քանի շրջան պտտվեց սղարանի շուրջը, ու նրան բռնեցի: Մտածեցի՝ վերջ: Ամեն ինչ բարեհաջող ավարտվեց: Աղջիկն ավելի ճարպիկ դուրս եկավ, քան կարծում էի: Նա դուրս պրծավ ձեռքերիցս ու վազեց ծիածանի կողմը: Չհասցրեց. ծիածանը թաքնվել էր ամպերի ետևում:

Այսպիսով՝ ես համոզված եմ,որ ուզում եմ ազատվել հիշողություններից: Վախենում եմ դատարկության զգացումից ու մեմորիանից: Աղջիկը նույնպես ցանկացավ լքել ինձ:

-Աչքերդ փակիր,-ասաց նա՝ ներքում հայցող աչքերը հառելով վրաս: -Ես սկսում եմ գուշակել ապագադ:

Համոզված եմ ուշադրություն գրավելու համար արեց, կամ պարզապես ուզում էր մեղքը քափել: Հոգնածությունից աչքերս փակեցի: Մի տեսակ ուզում էի քնել:

-22,-ասաց աղջիկը,- դու ժպտալով դուրս ես գալիս երկհարկանի շենքից թղթապանակը ձեռքիդ:

26:

Հանձնում ես բժշկի: Բողոքում ես ականջացավից: Բժիշկը հավատալիցսնում է, որ ականջի հետ ամեն ինչ կարգին է: Հարկավոր է հիվանդության օջախը գտնել: Հիմա ինքը շարունակիր հաշվել:

-28: 29: 30:...

-Ո՛չ: Մի՛ շտապիր, ավելի դանդաղ հաշվիր: Ամբողջ մարմնով շնչելով՝ ասացի.

-33:

-Քեզ պատգարակի օգնությամբ իջեցնում եմ ցած: Սպիտակ մեքենան աղմուկ հանելով՝ ճանապարհ է պահանջում բոլոր մեքենաներից ու հետոտներին:

-35:

Ես այլևս չէի լսում: Ես փնտրում էի նրան: Ոչինչ չի կարող ինձ խանգարել: Ես իրավունք ունեմ նրան գտնելու: Այստեղ ծառի բունը նման է օղակի, օղակը՝ արևի, արևը՝ տարրայի կափարիչի, իսկ կափարիչը՝ գոյրի: Եթե կխենք բունը, օղակը, արևը, կափարիչն ու գրոն, կստացվի ծիածան, ծիածան կամ կամար:

Կիտրոնը նման է նարնջի, նարնջը նման է գնդակի: Եթե կխենք, էլի կխենք, կստացվի կիսալուսին: Նույնն է՝ ինչ կամար կամ ծիածան:

36:

Աղջիկը տխուր ձայնով ասաց.

-Բժիշկները պայքարել են քեզ համար, ի սկզբանե չեմ հանճնվել: Այժմ հուսահատ եմ ու բացասաբար տարտերեքում եմ գլուխները:

Ես սայթաքում եմ: Կարծես կանգնած լինեմ առաջ գործող գնդակի վրա՝ նման կրկեսի ծաղրածուի կամ խեղդատակի: Հողը փախչում է ոտքերիս տակից: Ուռնաթաթերով զգում եմ հենարանիս ողորկությունը, ու չկա ոչ մի ճեղք կամ էլուստ բռնվելու համար: Ես այդպես էլ շտփորեցի կառչել:

37:

Բացեցի աչքերս: Աղջիկը չկար: Ես տեսա նրան: Ամբողջ մարմնով սարսափեցի: Նա կատարյալ էր: Ու խոնարհվեցի շատ դանդաղ, խորը ու կոր:

Տաքի ՉԱԽՉԱԽՅԱՆ



հետո կրծում եղունգներս,
մատներս,
մարմինս,
հոգիս,
հոգուն հաջորդող որջ ենթադրյալը...
(Քատտիկ նկրոզ՝
պոետիկ ախտանիշով):
Ճգնաժամի պայմաններում
դեպրեսիայից էլ կարելի է պոեզիա
քամել...
Ու առհասարակ՝ ամենից ու ամենքից,
ձեռքիդ տակ ընկած ցանկացած գոյից,
որ սովածի բնագոր չտանի
ինքնակերության,
որ չքամվի մարմինդ,

ԷԼԻ ԵՐԿԻՆՔ

(Պերճի պարճառով կամ շնորհիվ...)

Տե՛ր, փախչելու տեղ չկա...

(Ամեն անգամ,
երբ անսովեր հանգուցյալներս բռնում են ոտքերիցս
ու քաշում դեպի մերձիմահ հարթություններ,
ամեն անգամ,
երբ ստորգետնյա մոլուցքներս աչքով են տալիս,
ամեն անգամ,
լիբիդոներիս բավարարման եզրակետին,
Կյանքը
հևարվ,
ուժասպառ,
շնչակտուր տեղ է հասնում,
քաշում ականջներս,
հայրական ապտակ տալիս,
բռնում մազերս,
բարձրացնում վեր,
պտտում,
պտտում
ու էլի շարտում... երկինք:
Աստված շփոթմունքից կուլ է տալիս լեզուն.
-Էլի դու՞:
Ու մենք մինչ լուսաբաց ջազ ենք լսում,
ժպտում,
լացում,
գոռում,
լռում,
խեղդվում ջազի մեջ,
խեղդում ջազի մեջ...
-Տե՛ր, գժվելը հետո. էս անգամ գործով եմ եկել)

-Ծիտ-թոչուն միջակայքում ես արդեն փորձել եմ
դրսևորման բոլոր հնարավոր ձևերը.
Որ հարթություններ վստահիր ինձ, Տե՛ր,
թույլ տուր խաղալ Քեզ հետ,
ու անմեղդոտ հաղթել...
(Դու էլ ես փոքր եղել, չէ՞) :
Օգնիր ինձ հաղթահարել Քեզ,
կորցրու Քեզ իմ մեջ,
թուլացիր,
հանձնվիր
ու Քո կործանումը կլինի Քո ազատագրումը...
Թույլ տուր դարձյալ ծնել Քեզ իմ մեջ՝
իմ կերպարով ու իմ մտածողությամբ...
Ու մի ամաչիր Քո մերկությունից.
ես էլ եմ մերկ ծնվել:

Հետ եմ եկել, Տե՛ր:
Հա, փախչելու տեղ չկա...

Օ՛, ԼԻ ՊՈ...

Մուսայի փնտրտուքը
տանում է շոշափելիի ամենաբարձր կետը,
ցուցամատով ուրվագծում հեռուն,
աչքով տալիս
ու ծիծաղում քթի տակ:
Հեռուն՝ տաք, մերկ ու ցանկալի...

Ափերս քոր են գալիս բառի մոլուցքից:
Ես եղունգներով քերում եմ պատը՝
ձեր իմացած պատերից ամենահաստը,

հոգիդ,
հոգուդ հաջորդող որջ ենթադրյալը...

Տարածաչափության ամենաբարձր կետում
ես ու պոեզիան որոշում ենք ինքնասպան լինել.
հեռու տանող ամենակարճ ճանապարհը՝
փափուկ ու ազատ, ուր, պոեզիա,
ես կկորցնեմ ինձ ու կգտնեմ քեզ իմ մեջ,
դու կկորցնես քեզ ու կգտնես քեզ իմ մեջ...

Կարճ ասած.
Ես ու պոեզիան կկանգնենք այնքան,
մինչև կմնա միայն պոեզիան:

Ինչ լավ են մայվում պոետ աղջիկները
մերկ քաղաքի ֆոնին
փետրվարի վերջին
գարնան հոտը քթին
կես քուն - կես արթուն
փողոցում մթին...

Քաղաքում
ուր լինում են հեջ չապրվող ժամանակներ
հեջ չգրվող ժամանակներ
ու դատարկություն
սուր ատամներով
երկար պոզերով
սև եղունգներով
ու պոետ աղջիկներ
որ վազում են աշխարհի կապտած երակներով
դեկտեմբերից փետրվար
փետրվարից դեկտեմբեր
մեկի հայացքից
մեկի քայլվածքից
մի sms-ից
իրենց իրենցից
մի քրջոտ բանից
հազիվ բեղմնավորված
որ ընկնում են փողոցներում
ճանկում ասֆալտը
գալարվում
ճշում
ու պատռվում երկունքի ցավից...

Իմ չծնված որբ
չունենամ զքեզ Պոեզիա
պորտալարի մեջ խեղդված որբ...

(Ես կկարոտեմ ձեզ իմ չունեցածներ
անմեր ու անհեր իմ չգրածներ)...

Պոետ աղջիկներ
Հաս, Ման, Ան ու էլի
գրելու տենդից
ձմեռվա ախտից
քամված ու հյուծված
սկզբ ու հոգի
ամուր գրկեք նրան
ով կգա փետրվարի սկզբին
մեջտեղում
ու մանավանդ վերջին...

ԱՇՈՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

1979, ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 13

2.
Աղոթք

Ենթարկվել
Առաջին լուսաբացին

Մենք չենք մսածում.
Մեզ են մսածում

ՄԵԿՆՈՒՄ

1.
Հայացքը ճանաչում է
Եվ սահում,
Չի սեսնում մեկնումը,

Հակիրճություն՝ ագռավից
Լռություն՝ օձից
Մինչև հմայք



Լռության ալիքները
Տարածվում են
Առաջ
Եվ ևս խաղաղություն

Գիշերները
Լեռներ բարձրանալու
Հավես չկա

2.
Մեր ոսկերը
Մակընթացության
Մեջ ենք լվանում

Իմ Կասսայան աղբյուրը
Սուրճն է

ՆՈՐ ՏՈՒՆ

Մուսաները
Պոչոսր ջրում
Ջուկ են ուրում

1.
Քառակուսի փառերով
Քո շուրջը
Ժամադրավայր եմ կառուցում
Յոթերորդ երկնում

ԱՅԳՈՒ ԱՌԱՎՈՏԸ
1.
Մի ուշաքափի սերև
Պոկվեց ու ընկավ փառին.
Քարը ձայն չհանեց

2.
Մարդը
Հյուսում է
Առաջին նուսայնը
Նոր սան

2.
Մի վայրկյան հետո
Քարերին սարսուռ կսա
Օձի ողաջ մարմինը

ԶԳԻՏԱԿՑՎԱԾ
ՄԿԶԲՆԱՏՈՂ

3.
Պոչոսր արևը.
Քրիստոսն է լույս ժոյսում
Արեգակն արդար

1.
Անաղաղը կանչում է
Լռության մեջ
Անսաղաք մոյեմբեր
Քամին գուռակում է
Մեր մերկ ճյուղերը

4.
Ճափած կեղևից
Մի մրջյուն ջուր է ծծում
Կանաչը՝ երկինք
5.
Նոր դրած դեզից
Պատուս ֆրիսինգ է բուրում
Հորս արցունքները



ԵՐԿՈՒ ՊԱՏՄԱԿԱԾՔԻ ԱՐԱՆՔՈՒՄ

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վրա անհոգ մեռած թողել, եկել եմ իր մոտ օգնություն խնդրելու,- հերոսն ունի Գևորգի օգնության կարիքն այնպես, ինչպես «Փոքր աղջկա» հերոսը՝ բժշկի կարիքը:

Իրականում բժիշկն ու Գևորգը մահն են իրար՝ երկուսն էլ խոսում են նույն ոճով (բառերը չեն կարում իրար) և շատ մահն են հերոսուհուն, ով անընդհատ խոսում է նրա (Գևորգի և բժշկի) ծերության մասին՝ կարծես փորձելով մտքերը դուրս հանել այդ միջոցով.

«Գլուխս կախելիս տեսա նրա քափանցիկ մաշկով, լայնացած երակներով ծեր ձեռքը իմ սպիտակ կրծքի վրա: Սև ու սպիտակի, լույս ու մութի պես էր» («Փոքր աղջիկ»), «Ուշադիր նայեցի նրան, ասաց՝ էղպես ուշադիր չեն նայի ծերացող մարդուն:

Մենք երկուսով էինք պայքարում իր ճերմակելու դեմ: Նա երիտասարդության, հատկապես Արմենի հետ մրցելու պատճառով է արագ ծերանում:

Չեմ ուզում Գևորգս մահանա: Իմ ջանքերով նրանից շեղում եմ, գայթակղում եմ մահին» («Կանաչ տետր»):

«Փոքր աղջիկ»-ում ինքն էլ իրեն է փոքր գում... բժշկի կողքին, իսկ մյուս պատմվածքում արդեն «հաղթահարել» է իր փոքրությունը:

«Փոքր աղջիկ» պատմվածքում շատ նուրբ և զգույշ շարադրամանք մի քանի իրավիճակներում զգացվում է աղջկա փոքրությունը, ինչը նա չի էլ քաքցում. «Ես նայում էի նրա թիկունքում նստածներին. երևի հայրն էր՝ տաք ու ծանր ձեռքի ավիով շոյում էր որդու գլուխը. հորս կարողությունը, ուզեցի լացել, ամաչեցի», «Այս շատ պուճուր աղջիկ ես: Տեսնես էն ժամանակ գիտեի՞, որ մի փոքր աղջկա համար էլ եմ կռվում», «Լսի, դու կարող է մեր ջոկատի Ծահենի աղջիկն ես: Հաղթանդամ, բոյով տղամարդ էր: Հա՞: «Չէ, պապաս կոլտ էր ու նիհար», չէի ստում, բայց սուտ ասելու պես ձայնս դողում էր, որովհետև չէի ուզում նրանց ջոկատից լինել, որովհետև արդեն ուզում էի գրկի ինձ»:

Եթե «Կանաչ տետր»-ում Ըն-

դերի մահն է թափառում պատմվածքում, «Փոքր աղջիկ»-ում էլ Լիլիթի մասին հիշողություններն են տեղի-անտեղի խցկվում հերոսի և հերոսուհու միջև, և երկու դեպքում էլ խանգարում են հերոսուհուն. «Անընդհատ Լիլիթին հիշեցնելը ինձ նյարդայնացնում էր» («Փոքր աղջիկ»), «Երևի Ընդերի մասին մտածելս մոխր էր կանխագուշակության իմ բոլոր շնորհները» («Կանաչ տետր»):

Հերոսը նույն կերպարն է, նույն մարդը՝ տարբեր իրավիճակներում, տարբեր ժամանակներում, բայց միևնույն արվեստագետոտ խենթն է: Եթե կերպարը «Կանաչ տետր»-ում իր տարօրինակ արարքներով զարմացնում է գրողին («Չախ շրջվեց: Չտեսավ զարմանքս: Չեռքերը վեր պարզեց ու սկսեց գայլի նման ոռնալ»), «Փոքր աղջիկ» պատմվածքում ևս շարունակում է զարմացնել՝ առանց կաշկանդվելու ու զգալու իր տարօրինակությունը («Նայեց ինձ, ես գերեզմանաքարերին էի նայում ու մտածում՝ բժիշկս խելագար է...»):

Հարկ է նշել, որ կերպարառուցվածքային առումով տարբեր են պատմվածքները. «Փոքր աղջկա» նախադասություններն ավելի թեթև են, անցումները՝ սպասելի՝ ի տարբերություն «Կանաչ տետր» պատմվածքի, որտեղ ավելի միանգամից է դեպքերի հաջորդականության փոփոխությունը: «Փոքր աղջիկ» պատմվածքում նույնիսկ «երեքությունը» սիմվոլի տեսքով է ներկայացված: Այն հեղինակի համար ամբողջականության, լիարժեքության խորհրդանիշ է. երեքից մեկի պակասի դեպքում էլ ամեն ինչ կկիսվի, որը պարզ չէ, թե գրողն ինչպես «կրնկլալի ու կմատուցի», քանի որ առաջմ ամեն ինչ ու ամեն ինչը երեքն են. «Ես շատ մոտեցա. կոնքի կորի վրա լրիվ գույները հավաքվել էին՝ մաշկի ճերմակը, խոտերի կանաչն ու արյան կարմիրը», «Չեռքը դրեց գլխիս: Հենց այդ պահին սիրահարվեցի. ձեռքի հպումի, անպաշտպան ժպիտի, «փոքր աղջիկ» ասելու պատճառով», «Համ վատ էի, համ երեք թիկունք էի գգում. իմ, բժշկիս, Լիլիթի...»

Հետաքրքիր է, որ երկու պատմվածքներում էլ հեղինակն անընդհատ հիշում է հորը, կարոտում, չնայած որ «Փոքր աղջիկ»-ում հայրը. «...պատերազմում էր մահացել, իր անունով դպրոց էլ կա»: Ի տարբերություն վերոնշյալ պատմվածքի, «Կանաչ տետր»-ում կարծես հոր իրական կերպարը բնութագրած լինի, այնքան տեսանելի, ռեալ ու շոշափելի է նկարագրել: Հայրը, իմանա-

լով, որ աղջիկը պատմվածքներ է գրում, իր գրած բանաստեղծությունների կանաչ տետրն է տալիս աղջկան. «Մրանք կարող ա քեզ պետք գան: Կարաս օգտագործես հողվածներին մեջ (ինքը պատմվածքներին միշտ հողված էր ասում): Բառերը սովորական են, դու, եթե ուզես, փոխի».- այնքան բնական է ամեն ինչ, յուրաքանչյուր բառ, նույնիսկ մտածողությունը: Սակայն պետք է նշենք, որ Նառայի պատմվածքների բառերը նույնպես սովորական բառեր են, բայց դրանցում ամփոփված միտքն արտասովոր է...

«Փոքր աղջիկ» պատմվածքում բժշկի կերպարը խորհրդանշական է, և իրականում պարզ չէ՝ ինչ բժշկի մասին է խոսքը: Այսինքն՝ հերոսուհու համար նա իրոք բժիշկ է, բայց ոչ բժիշկ՝ մասնագիտությամբ, քանզի կերպարն ավելի շատ արվեստագետի, գուցե գրողի («Դու ինձ հրաշալի բաներ տեսցրիր, գրել եմ») հատկանիշներով է օժտված, քան բժշկի: Բժիշկը բժիշկ է հերոսուհու համար միգուցե այն պատճառով, որ հերոսուհուն շատ բան է ցույց տալիս, փորձում նրան շեղել առօրեականությունից, այսինքն՝ բուժում է աղջկան («Համոզված էի, որ դա ինձ համար է ասում, որովհետև հասկանում է, որ ես գգում եմ իր մարգարե լինելը, հակառակ դեպքում՝ չեմ հավատա, որ կարող է բուժել»): Իրականում բժիշկը տղամարդ է, ում սպասել ու գտել է հերոսուհին: Սպասել, քանի որ «... մերկ կրծքիս տակի սպին տեսավ, նրանք ծանոթ էին իրար».- այսինքն՝ բժիշկը չի իմացել, որ ինչ-որ մեկի սրտում սպի է թողել, աղջիկն էլ չի իմացել, որ սպին հենց նրա հետքն է:

Պատմվածքի ավարտը զարմանալի հակադրությամբ է ներկայացված. մեղմ զգացողություններին գալիս են փոխարինելու դատարկ զգացողությունները. «Դռանը հենված նայում էի կանաչ գուլպաներիս. նա էր հագրել... այն զգացողությունն ունեի, թե էի մեջքիս այն դատարկությունն ու հոգնությունն է».- այստեղ ինչ-որ խաղ կա, որի կանոնների պարզաբանումը այդպես էլ մնում է դեռևս գրվելիք պատմվածքների տողերում փնտրել...

«Կանաչ տետր» պատմվածքում իրավիճակները տարօրինակ երկիմաստ են «ցուցադրվում», հիշենք թեկուզև սկիզբը, որտեղ զգացողություններն էին խառնված և որտեղից էլ ընթացք են առնում հետագա «միքս»-երը: Օրինակ, երբ հերոսուհին տաքսու վարորդի վրա գոռում է, որ վերջինս գույշ լինի, քանի որ ազնավ է տրորել, վարորդն էլ ի պատասխան ասում է. «Թուր

ջան, շատ ռոմանտիկ ես, տղամարդու սև տրուսիկ ա, խի ես խառնվել իրար»: Այսինքն՝ կամ աղջիկն այլ աչքերով է նայում իրերին, կամ էլ ուղղակի հոգեվիճակ է՝ շփոթված, լարված ու շտապող մարդու:

Այս պատմվածքում, կարող ենք ասել, հեղինակային ոճն ավելի ընդգծված է, որը «արվում» է նույնիսկ փոքրիկ նախադասություններում. «Ես էլ էի մեղքս գալիս», «...երևի ավելի տխուր բան չկա, քան հորդ գրած բանաստեղծությունները չհավանելը», «չհուսահատվել էր պետք», «այսր, ինչի՞ց էի էէէ՞ վախենում», «...մահվան հետ ապրած մի օր», «Չէ՞...էէ՞... ու մտքումս ոտքերս գետնին խփեցի»...

Հետաքրքիր ձևով մահն են Գևորգ-բժիշկն ու հերոսուհին. մահն են իրենց «տարօրանակությամբ», երկուսն էլ կտրված են աշխարհից և ունեն իրենց առանձին աշխարհը, ապրում են զգալով, իրերին նայում են ապակե հայացքներով և սիրում են սիրել. «Չանգում եմ Գևորգին՝ սեր ջան, երազումս իբրև դագաղում ինձ փորի վրա եմ պառկեցնում: Գևորգը էի հուսահատ է՝ իմ երազում էլ մեջքիս մրջյուններ էին ման գալիս, գուցե իմ երազը քո երազի մեկնաբանությունն է:

Խանդեց»...

Գևորգը բանաստեղծական աչք ու մտածողություն ունի, բայց միաժամանակ նա տղամարդ է՝ հասուն ու կայացած, «խորամանկ», ով չի մոռանում ու զլանում հերոսուհուն ասել. «Տես լուսինն ինչ սիրուն է, ոնց որ տուտուզիկը լինի քիթի մեջ չիշիկ անելիս»,- բայց այս պարագայում պետք չէ առանձնացնել՝ այսինքն՝ հերոսը ոչ թե գրող և տղամարդ է, այլ՝ գրող-տղամարդ:

«Կանաչ տետր»-ը շրջում է պատմվածքի ամբողջ տարածքում. վերնագիրը դեռ «չմոռացած»՝ գալիս է կանաչ տետրի իմաստի բացատրությունը, որը, սակայն, ամբողջովին չի բացապարզվում, քանզի վերջում նոր միայն ամփոփվում է և՛ կանաչ տետրի իմաստը, և՛ «Կանաչ տետր» պատմվածքի իմաստը. «Բոլոր ծանր, դժվար բաները տանում են հենց այդ ուրվագծված պատկերը, որը շատ պատկերների պես զեղչված է. աղջիկը հոր ուսերին նստած՝ վերադառնում է մանկապարտեզից: Եթե ես այն ժամանակ կարողանայի կռահել հորս ուսերի բեռի ծանրությունը... նրա համար այդ նշանակությունը: Հենց այս թերացման մեջ է հորս առաքիությունը՝ ներկայացնել ինձ բացարձակ բան, ինքն իր՝ իմ հեղինակը...ես՝ իր շտապված անհաջող, կանաչ տետրի բանաստեղծությունները»...

Լ Ի Ն Ե Լ Գ Ե Գ Ա



Լինել
 Այո՛ւ դը յավալում գտնվող նրա արվեստանոցում և տեսնել կենտրոնում դրված ջրով կիսալի վաննան, որի եզրին մեղմ իջնում է կնոջ հոտով լի սրբիչը... Դեզան աշխատում է իր նոր կտավի վրա դանդաղորեն, անվերջանալի բծախնդրությամբ, վրձինը գրեթե չի ցնցվում... Նա երբեք չի շտապում նկարել և երբեք չի ավարտում նկարը... Արվեստանոցում փակ են բնական լույսը քափանցող հնարավոր բոլոր ճանապարհները. նա աշխատում է արհեստական լուսավորության ներքո՝ չվստահելով արևի շողերին և առհասարակ բնությանը... Նա վստահում է միայն իր ուսուցիչների՝ հիմնավորելով արվեստում ընդօրինակման իր ողջ փիլիսոփայությունը, որտեղ բացակայում է սեփական ոճը գտնելու նպատակը... Ի՞նչ է Դեզայի համար ընդօրինակումը, եթե ոչ մեծագույն նկարիչների էսքետիկան հասկանալու անհագ կիրք... «Դեզան չունի ոճ. Դեզան հենց ինքը ոճ է...», ասում է Գոգենը...

Նա հենց այնպես չի տեսնում բնական գույներ և գծեր, դրանք երևում են այն ժամանակ, երբ նա թափանցում է Վերոնեգեի և Էնգրի ներաշխարհի, որտեղ գիծն այլևս գիծ չէ, և գույնը այլևս գույն չէ. դրանք արդեն տեսողական և հոգեբանական ընկալումներից դուրս մտածողություններ են...

Լինել
 Դեզա և կիսատ թողնել իրավաբանությունը, փողոցով քայլել հոր հետ և թքած ունենալ կարծիքների վրա՝ մերթընդմեք ուղղելով կտր շրջանակներով ու կապույտ ապակիներով ակնոցը, սրամտել՝ ազնվական մատները թխթխկացնելով սև ցիլինդրի գլխին, չունենալ անձնական կյանք և թափառել գիշերային բարդեղներով, հեշտությամբ կորել ամբողջի մեջ, բայց միշտ մնալ մեռյալ, տարվել ձիարշավորդներով, պարուհիներով և մերկ ու հարդարվող կանանց կերպարներով... Դեզան գիտի Դեզա-

յին... Դեզան չունի հուզականության ու սենտիմենտալի նրբություններ. նրա նկարների ողջ զգացմունքայնությունը դրա բացակայության մեջ է... Դեզան տարված է գույնի, գծի, մտքի ու ֆորմայի շարժումով... Նրա պարուհիները երբեք չեն քարանում շարժման մեջ, քանի որ գտնում են իրենց հենց շարժման սրտում՝ որսալով հաջորդ շարժման կռահումը... Դեզայի շարժումը չունի անցյալ ու ապագա, այն պատկանում է միմիայն ներկային, իսկ գույները արտահայտում են յուրաքանչյուր շարժման անկրկնելիությունը...

Լինել
 Դեզա և պատկերել լոգանք ընդունող ու սրբիչով մարմինը շորացնող կնոջ հմայքը... Արդյոք կարո՞ղ է բնթությունից զուրկ և տգեղ կինը հմայիչ լինել... բայց Դեզան գիտի Դեզային. նրան բացարձակապես չի հետաքրքրում կնոջ դիմագծերի գեղեցիկ արտահայտչականությունը, նրան հուզում է կնոջ ձեռքում բռնած սրբիչի շարժումը, որ սահում է մարմնի վրայով, փաղաքշում մաշկը. ձեռքի շարժումից թեթև դրդում են կրծքերը, ալիքները իջնում են ցած դեպի որովայնը, շոյում անուկների նուրբ նեղուցները... Դու արդեն լսում ես մաշկի տակ վազող արյան հոսքի ձայնը... Դեզան չի դիպչում կնոջը. նա կանգնած է մի փոքր հեռավորության վրա և հարդարում է նրա շազանակազույն վարսերը... Դեզան գիտի, որ կնոջը միայն հավելով չեն սիրում...

Լինել
 Դեզա և կյանքի վերջում մնալ վել ճերմակած, կույր Հոմերոսին՝ քանդակելով մոմե և կավե պարուհիներ և հետո սեպտեմբերյան մի օր մահանալ՝ չմռանալով ֆորեմին թելադրել սեփական դամբանաճառը՝ «Նա այնքան շատ էր սիրում նկարել»...
 Լինել Դեզա...
 Մնա՛լ Դեզա...

Արամ ԳԱԶՅԱՆ



ԹՎԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԱՐԵՎԱԿ / Էլեկտրոնային գրադարան- www.eanc.net
ARMENIAN HOUSE / Հայկական էլեկտրոնային գրադարան www.armenianhouse.org

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՄՈՒՆՈՐԱԿ / Խոսող գրքեր- www.mankutianmolorak.com
FREE BOOKS / Էլեկտրոնային գրադարան- www.freebooks.do.am

ՀԱԳ / Հայաստանի ազգային գրադարան- www.nla.am
168 ԺԱՄ / Արասահմանյան գրականության թարգմանություններ- <http://www.168.am/am/colarch/14>

*Տեղեկանում ներառված չեն թերևս միայն հեղինակային գրական բլոգները՝ դրանց անհամեմատ մեծ համակայան դասառով:

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԳԵՄՆԵՐ

ՆԱՐՑԻՍ / Գրական-գեղարվեստական մշակութային հանդես www.narcis-handes.am

ԻՆՔՆԱԳԻՐ / Արդի գրականությանը նվիրված հանդես www.inknagir.org

ԳՐԱԿԱՆ ԲԼՈԳՆԵՐ

ԳՐԱՆԻՇ / Գրական բլոգ - www.blog.antashat.com
ԻՆՔՆԱԳԻՐ / Գրական բլոգ- www.ankakh.com/inknagir
ԳՐԱԿԱՆ ԿԱՍՈՒՐՁ / Հայ և դարսիկ բանաստեղծների ու գրողների www.lit-bridge.com
Հայ Բանաստեղծության Համացանցը / Բանաստեղծական բլոգ- www.armenian-poetry.blogspot.com
ԳԻՐ / Գրողներ, ասողիկներ, գիր, գրականություն- www.gir.am

ԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

ԱՐԱՄ ՊԱՉՅԱՆ / Պաշտոնական կայք - arampachyan.com
ՎՐԱԵՐԹ Վահրամ Սահակյանի դասընթացի կայք- vraert.com
ՍԱՐԳԻՍ ԿԱՐԵՅԱՆ / Բանաստեղծություններ - sargis.neolocal.net
ԼԵՎՈՆ ՄԻՐԻՋԱՆԻԱՆ / Պաշտոնական կայք - levonmiridjanian.com
ՌԱԶՄԻԿ ԴԱՎՈՅԱՆ / Պաշտոնական կայք - davoyan.name
ՎԱՐԱՆԴ / Բանաստեղծի կայք - varandbooks.blogspot.com
ԿԱՐԵՆ ԴԱՐՍԼՅԱՆ / Պաշտոնական կայք - karenkarslyan.com

ՄԵԿ ԳՐՔԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԿԱՅՔԵՐ

ԱՆՏԱՇԱՏ / Կարեն Անսաճյանի ԱնսաճաՏ. րդեգիա 78% գրքեր նվիրված կայք www.antashat.com

ԳՐՈՂՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԻՔԻՓԵԴԻԱ / Ազատ հանրագիտարան www.wikipedia.org
ՀԳՄ / Պաշտոնական կայք www.wua.am
ՓԵՐՍՈՆՆԱ / Հայաստանի հայքերի մարդիկ www.persons.am

ԳՐԱԿԱՆ ՖՈՐՈՒՄՆԵՐ

ԱՐՄՍՈՈՒԼ www.armsoul.com
ԴՆ ՖՈՐՈՒՄ www.dnforum.am
ԴԱՐ ԱԿՈՒՄԲ www.akumb.am

ԱՌՑԱՆՑ ԳՐԱԽԱՆՈՒԹՆԵՐ

www.buybook.am www.books.nt.am www.book.am